



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



891.71

4-72

Jan 9th

91

891.81  
4-82

20 MAR 1913

27 JUL 2006

19 NOV 2010

Φ 0 Φ 0 L

# ԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՄԵՆԱՅՆԻ ԱՆՀԱՐԱՏՈՒԼԻ ՄԻ ԴԼՊԲ.

ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆՈՎ

## Աղասի Թարգմանեց

## ՊԵՐՁ ՊՈՇԵԿԱՆՑ

Թիֆլիս, 1904  
Տպարան „ՀԵՌՄԻՒՍ“ Միթայկեան փողոց, № 81.  
(16)

20 MAR 2013

19466

2000 JUL 15

J 0 P 0 P

# ଶ୍ରୀକୃଷ୍ଣାମୁଦ୍ରା

APPENDIX D: 4.102040200 4.102040200 80%

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Марта, 1904 г.

83865000P 690P

1227 - 92

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

Digitized by srujanika

ՄԵԾԱՐԳՈՅՆ ՊԱՐՈՒՆ՝ քանոնական

### 3. $\Psi$ - $h$

Digitized by srujanika@gmail.com

\*ИЗЪ КНИГЪ БИБЛІОТЕКИ  
ОФИЦИАЛЬНОГО  
ХОДЖИКАНЪ  
— Основа въ Тифлисѣ 1911 г.

ՄԱՐՄԱՐԵԴՐԱ  
ՔՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ազատեա Տիկ ոնովնա՝ վաճառականի աղջիկ, հարսնացու:  
Արինա Պանևելշմունվնա՝ նրա հօրաքոյը:  
Ֆեկա Թփանովնա՝ միջի մարդ (մօցիքուլ):  
Պոդկալեսին՝ ծառայող, նադգօրնի սովէտնիկ:  
Կօչկարեօլ՝ նրա ընկերը:  
Սահչնիցա՝ էղեկուտոր:  
Անուշկին՝ հետևակ զնդի պաշտօնաթող սպայ:  
Ժեւակին՝ ծովային պաշտօնեայ:  
Գունեաւկա՝ սպասուհի:  
Սատրիկով՝ Գոստիննի դվօրի վաճառական:  
Ստեփան՝ Պոդկալեսինի ծառան:

Հինգորդ Բաժդիկեան  
Տուխուք 1918 Հունիս  
ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ  
Ամուրի մարդի սենեակը  
Տեսիկ Ա.

Պոդկալեսին: (Միայն, չիբուլը (ծխամորճ) ձեռքին  
պառկած է բազմոցի վրայ:)

Ե՞ւ, Էսպէս է, երբ մարդ պարապ-սարապ, մէն  
մենակ նստում է ու մտքի հետ ընկնում, տեսնում է,  
որ անպատճառ հարկաւոր է ամուսնանալ: Եւ ճշմարիտ,  
ինչ կընշանակէ, ապրում ես, ապրում՝ ու մէկ էլ էն  
ես տեսնում, որ գլուխի մի փորձանք եկաւ, բանդ ձախ  
գնաց: Դէս, առ քեզ, բարեկենդանն էլ ձեռնաթող ա-  
րինք: Ալմար՝ ընչի՞ իմ կարծեօք՝ ամէն ինչ պատրաստ  
է: Ահա երեք ամիս է, որ միջի մարդը գալով—զնալով  
հոգեհան եղաւ, ոտները մաշուեց. ուղիղ ասած՝ ինքու  
էլ եմ ամաչում:

Ե՞ւ, Մտեփան:

Տեսիկ Բ.

Պոդկալեսին, Ստեփան:

Պոդկալեսին: Միջի մարդ պառաւը չի եկել:

Ստեփան: Ո՛չ, չի եկել:

Պոդկալեսին: Դերձակի մօտ եղած:

Ստեփան: Եղայ:

Պողկալեօսին: Հը՛, ֆրակս կարում է՞, թէ ոչ:  
 Ստեփան: Կարում է:  
 Պողկալեօսին: Ի՞նչ տեղն է:  
 Ստեփան: Էն է հա, պրծնելու վրայ է, օղակներն է  
 շարում:  
 Պողկալեօսին: Ի՞նչ ասացի՞ր:  
 Ստեփան: Ասում եմ՝ սկսել է օղակները շարել:  
 Պողկալեօսին: Հօ չը հարցրեց, թէ քո աղէն ընչի՞  
 է ֆրակ կարել տալիս:  
 Ստեփան: Ո՛չ, չըհարցրեց:  
 Պողկալեօսին: Կարելի է, քեզ ասած լինի, թէ,  
 երեխ, քո աղէն պահկուելու միտք ունի:  
 Ստեփան: Ո՛չ, բան չասաց:  
 Պողկալեօսին: Բայց նրա մօտ ուրիշ ֆրակներ հօ  
 տեսար. ախար նա դերձակ է, շատ ֆրակներ կը լինի  
 կարում:  
 Ստեփան: Այս, շատ ֆրակներ կային կախութուած:  
 Պողկալեօսին: Եւ, ի հարկէ, ուրիշների ֆրակների  
 մահուտն իմիս պէս լաւը չէր լինի:  
 Ստեփան: Այս, ձեր ֆրակի մահուտն, աւելի լաւ  
 էր, տեսքով էր:  
 Պողկալեօսին: Ի՞նչ ասացի՞ր:  
 Ստեփան: Ասում եմ՝ ձեր ֆրակի մահուտն աւելի  
 տեսքով էր և լաւը:  
 Պողկալեօսին: Լաւ, իսկ դերձակը հօ չը հարցրեց՝ թէ  
 քո աղէն ընչի՞ է էսպէս բարակ մահուտից ֆրակ կարում:  
 Ստեփան: Ոչ:  
 Պողկալեօսին: Հօ չը հարցրեց, թէ կարելի է քո ա-  
 ղէն պահկուելու միտք ունի:  
 Ստեփան: Ո՛չ, պահկուելու մասին խօսք չեղաւ:  
 Պողկալեօսին: Իսկ զու հօ ասացիր նրան, թէ ես  
 ի՞նչ ասաիմանի տէր եմ և որտեղ եմ ծառայում:

Ստեփան, Ասացի, հասկացրի: մայ մատեսալ  
 Պողկալեօսին: Նա քեզ ի՞նչ պատճառինեց:  
 Ստեփան: Ասաց՝ կաշխատեմ լաւ կարել:  
 Պողկալեօսին: Լաւ, գնան: (Ստեփանը գնում է):  
 Տեսիլ Գ.  
 Պողկալեօսին (մայն):

Ես այն կարծիքի եմ, որ սև ֆրակն աւելի պատ-  
 ուաւոր է: Գունաւորն, խեկապէս՝ վայելում է քար-  
 տուղարներին, տիտուխարնիներին <sup>1)</sup> և ուրիշ մանր մունր  
 ծառայողներին—աւլով հաւաքածներին: Երանք, որ  
 բարձր աստիճանի տէր են, նրանք պարտական են  
 պահպանել... ը՛ ը՛ ը՛... բամնէլ մոռացայ... ը՛ ը՛ ը՛... շատ  
 լաւ էլ խօսք է... ափսան, մտքիցս թռաւ: Այս, էդպէս  
 է, որքսն կուղես՝ վլուխ տրաքացրու, խելքիդ զոռ  
 տուր, բայց և այնպէս՝ նախօրնի սովէտնիկը <sup>2)</sup> միհնոյն  
 է՝ ի՞նչ որ գնդապեսն է. զանազանութիւնն էս է, որ  
 նշանազգեստի վրայ էպօլետներ <sup>3)</sup> չունի: Է՛յ Ստեփան:

Տեսիլ Գ.

Պողկալեօսին, Ստեփան:

Պողկալեօսին: Վաքս (կօշկաներկ) առմր:  
 Ստեփան: Ասայ:  
 Պողկալեօսին: Ո՞ր տեղ առար. իմ ասած վօզնեսն-  
 ովի փողոցից, թէ ուրիշ տեղից:  
 Ստեփան: Իսկ և իսկ էն խանութից:  
 Պողկալեօսին: Լաւ վաքս է:

<sup>1)</sup> Աստիճանի անուն է: <sup>2)</sup> Նոյնպէս աստիճան է, <sup>3)</sup> Ուսա-  
 ղիբներ:

Սեփան: Լաւ է:  
 Պողկալեօսին: Փորձեցի՞ր, կօշիկ սրբեցի՞ր ո՞ք  
 Սեփան: Փորձեցի,  
 Պողկալեօսին: Լմր է փայլում:  
 Սեփան: Շատ լաւ փայլում է,  
 Պողկալեօսին: Վաքս ծախողը քեզ հօ չը հարցրեց,  
 թէ քո աղէն ընչի է էսպէս վաքս առնում:  
 Սեփան: Ո՞չ, չը հարցրեց:  
 Պողկալեօսին: Կարելի է ասած լինի, թէ քո աղէն  
 հօ մտքումը չի դրել պսակուելու:  
 Սեփան: Ո՞չ, ոչինչ չասաց:  
 Պողկալեօսին: Լաւ, զնա բանիդ:  
**Տեսիլ Ե.**  
**Պողկալեօսինը** (միայն) **Ամամաթագալիք**  
 կօշիկը հօ մի հասարակ բան է, բայց եթէ վատ  
 կարուած է և վաքսն էլ շէկ լինի, իմ կարծօք, լաւ ըն-  
 կերութեան մէջ հագնողին էնքան պատիւ չի բերիլ:  
 կարծես, էն չի լինիլ, ինչ որ պէտք է... Տէրը փրկի,  
 եթէ մատներիդ վրայ կոշտ էլ ունիս: Ամեն բան կը  
 տանեմ, բայց կոշտ՝ ոչ երբէք: Ե՞յ, Ստեփան:

**Տեսիլ Զ.**

**Պողկալեօսին, Սեփան:**

Սեփան: Ի՞նչ էք հրամայում:  
 Պողկալեօսին: Ասացի՞ր կօշկակարին՝ թէ չըլինի՝  
 մատներիս վրայ կոշտեր գոյանան:  
 Սեփան: Ասացի:  
 Պողկալեօսին: Նմ ինչ ասաց:  
 Սեփան: Ասաց՝ լաւ:  
 (Ստեփանը զնում է:)

**Տեսիլ Ե.**

**Պողկալեօսին:** Իսկապէս, ամուսնանալը ջանջալ  
 ձանձրալի) բան է: Մէկ՝ էս, մէկ՝ էն, մէկ՝ չգիտեան  
 ինչ: Ամեն բան տեղին ու կարգին պիտի լինի: Զէ,  
 եղրայր, հեշտ չէ, շատ գժուար է: Ե՞յ, Ստեփան: (Ստե-  
 փանը ներս է գալիս): Ուզում էի էն էլ ասել քեզ, որ . . .  
 Սեփան: Պառաւն եկել է:  
 Պողկալեօսին: Եկել է հա. կանչի գայ: (Ստեփանը  
 զնում է): Այս, գժուար, շատ գժուար բան է եղած:

**Տեսիլ Ը.**

**Պողկալեօսին եւ Ֆեկլա:**

Պողկալեօսին: Ամա, բարձր քեզ, Ֆեկլա իվանով-  
 նա: Հը՛, ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ: Աթոռ վերցրու, նստի՛ր,  
 պատմի՛ր: Ասա՝ ի՞նչպէս է... ըըը՛... ինչ էր... Մելա-  
 նիս . . .

Ֆեկլա: Ագաֆեա Տիխոնովնան:

Պողկալեօսին: Այս, այս, Ագաֆեա Տիխոնովնան,  
 եւ, իհարկէ, քառասունին մօտ պառաւ աղջիկ է . . .  
 էնպէս չէ... . . .

Ֆեկլա: Էդ է՛ որ չէ, չէ ու չէ, պսակուեցիք թէ  
 չէ, էլ գովելոց ձեռք չէք քաշելու, շնորհակալ կըլինիք:

Պողկալեօսին: Փչում ես, Ֆեկլա իվանովնա, սրւտ  
 ես խօսում:

Ֆեկլա: Պառաւեցինք գնաց, նոր պիտի սուտ խօ-  
 սեմ, սուտը սատանէն է (շունն է):

Պողկալեօսին: Դու բաժինքն ասա, բաժինքը: Մէկ  
 նորից սկսիր պատմել:

Ֆեկլա: Բաժինքն ես հարցնում, Բաժինքը Մոս-

Կովսկի ասուած թաղումն երկու յարկանի մի տուն է. եկամուտն էնքան էս որ կաց ու խնդա՛; Մի ալլափ—ալիւր ծախող մի հատ խանութի համար 700 է վճարում: Մի գարեջրատուն կայ, որ բերնէ բերան բազմութիւնով լիքն է լինում. երկու փայտաշէն խիզեր (ֆլիպեր, տան թերը) ունի, որոնց մէկը բոլորովին փայտից է, իսկ մէկէլի հիմքը քար է, ամեն մէկը 400 բուբլի օգուտ է բերում: Վիզբորդի կողմը մի բանջարանոց ունի: Հերու չէ մէկէլ տարին՝ մի տուուտուրական կապալով վերցրել էր, կաղամբ էր ցանել: Հասարակ վաճառական չըկարծէր. ինքը խելքը գլխին մարդ է, բերանը բաժիկի չի առնում, երեք որդու տէր է, երկուսին արդէն անաւորել է, իսկ երորդի համար՝ ասում է՝ զեռ ջահէլ է, թող խանութումն նստի, թող զեռ իմ գործին պէտք գայ. ես, ասում է՝ հասակս առել եմ, թող հիմի որդիս խանութ նստի, առուտուրը լաւցցնի:

Պօդկալեօսին: Իսկ աղջկայ շէնք ու շնորհքի համար ի՞նչ կասես:

Ֆելլա: Ղանդ ու շարար, պոօջներդ իրար կըկըպչին. լսի պէս սպիտակ, թշերը վարդ՝ ոնցոր կաթն ու արիւն... քաղլցր, համով, հնատով, որ էլ ասիլ չի լինի: Մինչև էստեղդ շնորհակալ կըլինէք, (ցոյց տալով կոկորդը). ծանօթ անծանօթի մօտ պիտի կանչէք՝ թէ ափարիմ, ֆելլա իվանովան, մինչև երկինք քեզանից շնորհակալ եմ:

Պօդկալեօսին: Բայց և այնպէս, նա հօ շտաբ-օֆիցիերի<sup>1)</sup> աղջիկ չէ:

Ֆելլա: Երրորդ գիլդի<sup>2)</sup> առուտուրականի աղջիկ է: Բայց էնպէսն է, որ զիներալի անունն ու պատիւն էլ

<sup>1)</sup> Բարձրաստիճան սպատ, կամ քաղաքացիական պաշտօնեալ:

<sup>2)</sup> Վաճառականական դաստկարդ:

չի գեանովը տալ: Նա ինքը առուտուրականի անունն էլ չի ուզում լսել: Իմ մարդս, ասում է, ով կուզի՞ թող լինի, թէկուզ՝ տեսք ու պատկեր՝ էլ չունենայ, միայն որ աղնուական լինի. Մի էնպէս էլ կոխտա է, որ կիրակիները հագած խաս շորերի խշխցոցն աշխարհքն է վերցնում, էն խաչն եմ երդում ուտում: Տեղն ու տեղն իշխանուհի է:

Պօդկալեօսին: Ախար, ես քեզ հէնց նրա համար նարցը, որ ինքս նաղլօրնի սովէտնիկ եմ, և իհարկէ ինձ... հօ համկանում ես...

Ֆելլա: Այ բան, ընչի չեմ հասկանում. Նրան մի նաղլօրնի սովէտնիկ էլ էր ուզում, չըտուին, աչքին դուր չեկաւ: Էն նաղլօրնի սովէտնիկը մի տեսակ բնաւորութիւն էլ ունէր. ինչ որ ասէր, ողջ սուտ էր, փշում էր ու փշում էր, բայց տեսնողը կարծում էր, թէ օրինաւոր տեսքով ու պատկերով մարդ է: Ի՞նչ արած, Աստուած նրան էլ էնպէս էր ստեղծել, նա ինքն էլ ուրախ չէր, բայց որ չէր կարողանում սուտ չըխօսել, կերնի, Աստուած էնպէս էր կամեցել:

Պօդկալեօսին: Էլ ուրիշ աղջիկ չըկայ, հէնց էդ մէկն է:

Ֆելլա: Նրանից աւելին էիր ուզում: Հատը չի գանուիր, բոլորիցն առաւել է:

Պօդկալեօսին: Որպէս թէ, բոլորից լաւն է, համ:

Ֆելլա: Թէկուզ աշխարհքը ստնատակ տուր, նրանից լաւը չես ճարիիլ:

Պօդկալեօսին: Լաւ, մայրս, լաւ, մտածենք, տեսնենք: Դու էգուց չէ միւս օրն արի: Քեզ հետ կընըստենք միասին, այ, ինչպէս հիմտ, ես երկար ու բարակ կըդգուեմ, իսկ դու կասես ու կըպատմես...

Ֆելլա: Խղճմտանքի արի, թէ քո Աստուածը կըսիրես, երեք ամիս է՝ գալիս գնում եմ ու մէջը փուչ

օխտը հատիկ, խալաթը հագիդ ձգւում ես ու չիբուխը փստացնում ու փստացնում:

Պօղկալեօսին: Զըլինի՞ դու կարծում ես, թէ սպակուելը մի և նոյն է՝ թէ ծառային ձայն տաս և հրամայիս. դէն, Ստեփան, հօքինսկը բեր, յետոյ հագնես ու դռնէ դուրս: Ո՞չ: Պէտք է մտածել, չափ ու ձև անել, տնտղել:

Ֆեկլա: Ի՞նչ կայ, տնտղել հօ տնտղել, ապահնքէ, որ տնտղուի: Այ, հէնց հիմի հրամայի՝ թող կաֆտանդ (բանկոն) բերեն՝ հագիր ու թոփը կառքով, փառք Աստծու, լաւ առաւօտ է, յարմար ժամանակ է:

Պօղկալեօսին: Հիմա: Զես տեսնո՞ւմ, ինչ ամպ օրէ: Տանից դուրս գամ ու յանկարծ անձրել շոռայ:

Ֆեկլա: Մեղքը քո վիզը: Էն է գլխիդ մազերն սկսել են ծաղկիլ, էգուց մէկէլ օրը՝ պսակուելուց, ձեռներդ լուա, էլ պէտք չես գալ: Մեծ բան. մարդը նադիօրնի սովէտնիկ է: Փեսացուներ կը գտնեմ, որ էլ երեսիդ մտիկ տալու պէտք չի լինիլ:

Պօղկալեօսին: Բնչի՞ր ես գլխիցդ դուրս տալիս, որ տեղից խելքդ փչից, թէ մազերս սպիտակել են: Ո՞ւր է այստեղ սպիտակ մազ: (Մատներով շօշափում է իւր գլխի մաղերը:)

Ֆեկլա: Ուրպէս թէ ընչի՞ սպիտակ մազ չը պիտի ունենաս, մարդ ես՝ հալորել ես: Սրան տեսէք, էս աղջկան չի հաւանում, մէկէլին չի հաւանում: Աչքիս առաջին մի կապիտան ունիմ, որ գլուխդ նրա ուսին չի հասնիլ ձայն ունի՞ ոնց որ լայն խոզովակից դուրս եկած. ինքն էլ ալգալանտերատվումն<sup>1)</sup> է ծառայում:

Պօղկալեօսին: Ուրքով գլխով սհւու ես խօսում, կաց, հայելումը նայեմ. որ տեղից շարադրեցիր, թէ

<sup>1)</sup> Երեխ, Աղմիրալտերատվումը:

մազերս սպիտակել են: Ե՞յ, Ստեփան, հայելին բեր կամ ոչ, թող մնայ, ինքս էղտեղ կը գամ: Սրան տեսէք, Սստուծ հեռու տանի՛. ծաղիկ ընկնելն առաւել լաւ է մազերը սպիտակելուց: (Գնում է միւս սենեակը:) ՏԵՍԻԼ Թ.

Ֆեկլա եւ Կօչկարեօվը (ներս վազելով)

Կօչկարեօվ: Ի՞նչ կայ, Պօղկալեօսին... (Տեսնելով ֆեկլային). դժու այստեղ ինչ ես շինում: Դէ, ես քո... Դու ինձ այս ասա՝ ի՞նչ սատանայ մտաւ գլուխդ, որ ինձ ամուսնացրիր:

Ֆեկլա: Ի՞նչ վատ եմ արել, կանոնն եմ կատարել:

Կօչկարեօվ: Կանոնն եմ կատարել: Ել կի՞ չէի՞նք տեսած: Անկին չէի կարող կառավարուել:

Ֆեկլա: Ախր դու ինքդ ձութ դառար, պոկ չեկաբատախ, ինձ պսակիր, հա պսակիր:

Կօչկարեօվ: Այ դու քաւթառ (մուկը): Այսահզ ընչու ես տուն խցկուել: Զը լինի՞, Պօղկալեօսիը միտք ունի...

Ֆեկլա: Ի՞նչ կայ: Աստծու տուած պարգև է:

Կօչկարեօվ: Այդպէս է հա: Տես անպիտանին, իսկի ինձ մի խօսք ասէլ է այդ մասին: Սրան ի՞նչ կասէք: Համեցէք: Տակնահան հա:

ՏԵՍԻԼ Ժ.

Նոյնի եւ Պօղկալեօսինը (Հայելին ձեռքին խոր-խոր մ չունայելով):

Կօչկարեօվ: (Ետեւից թագնում է եւ վախեցնում): Բօօ:

Պօղկալեօսին: (Ճշալով եւ հայելին ձեռքից վար ձեկով): Ցնդած: Բնչի՞... ախր ընչի՞..., ի՞նչ յիմարութիւն է: Էն-

ալէս վախեցրիր, իրաւ եմ ասում, որ սիրտս տեղահան եղաւ:

Կօշկարեօվ: Ոչինչ, կատակ էի անում:

Պօդկալեսոփին: Էղ ի՞նչ տեսակ կատակ էր: Մինչև այժմ խելքս տեղը չի գալիս երկիւղից: Հայելին էլ էստեղ վշրուեց: Զրի հօ չի տուն ձգած. անզիւական մագպինումն էր առնուած:

Կօշկարեօվ: Բաւական է. ուրիշ հայելի կը գտնեմ քեզ համար:

Պօդկալեսոփին: Հրամելիք, կը գտնեմ ի՞նչ հայելիք կը լինին: Տասը տարով մարդիս ալիոր ցոյց կը տան ու պատկերը կը ծովունեն, կայլանդակեն:

Կօշկարեօվ: Ե՞ս պիտի քեզանից նեղանամ, որ դու ինձանից՝ քո ընկերից ծածուկ գործ ես բնում: Մտադիր ես ամուսնալու հմա:

Պօդկալեսոփին: Դուրս ես տալիս, մտքով չի անցել անգամ:

Կօշկարեօվ: Այ քեզ կենդանի վկան: (Մատնացոյ է անում Ֆելլային:) Այ, առջնդ ցցուած է: Գիտենք՝ ի՞նչ պտուղ է: Ոչինչ, վասս չունի: Քրիստոնէին արժան գործ է. հայրենիքին նմանապէս օգտակար է: Համեցէք, աչքիս վրայ. ամեն հոգսն ես եմ վիզս կալնում: (Դառնալով Ֆելլային:) Հապա մէկ-մէկ ասա. մվ է, ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ. — ազնուական է, աստիճանաւորի աղջիկ է, վաճառականի տամից է. անունն ի՞նչ է:

Ֆելլա: Ազաֆես Տիխոնովսա:

Կօշկարեօվ: Ազաֆես Տիխոնովսա Բրանդախիստով:

Ֆելլա: Էղ է, որ չէ. — Կուպերդեագինա:

Կօշկարեօվ: Եստիլաւոչի (վեցկրապական) փողումն է, կարծեմ, կենում: Հմա:

Ֆելլա: Ոչ, այդպէս չէ. Պեսկից (աւազի փողոց)

մօտ է. Միլնի (սապոնի) խաչփողոցումն է բնակւում: Կօշկարեօվ: Այս, Միլնի խաչփողոցումն — էն փոքրիկ խանութի ետելը — մի փայտէ տուն որ կայ, հմա:

Ֆելլա: Խանութի ետելը չէ. այլ գարեջրատան միւս երեսին:

Կօշկարեօվ: Ի՞նչ գարեջրատուն. այդ տեղն ես չըդիտեմ:

Ֆելլա: Խաչփողոցի կողմը որ թեքուիս, գիմացդ մի պահապանի տնակ կայ, պահականոցն անց կաց, թեքուիր ձախ, ուղղակի առջևե կը տնկուի մի փայտէ տուն, որտեղ հիմի բնակւում է էն կար անող կինը, որ մի ժամանակ ապրում էր սեսաթի օրէր (աւագ) սեկլիստարի<sup>1)</sup>: հետ: Կար անող կնոջ մօտ չը մըտնես, նրան անց կացար թէ չէ, երկրորդ քարէ տունն է. էնց էդ տունը նրանն է. էստեղ է բնակւում նա ինքը — հարսնացուն — Ազաֆես Տիխոնովսան:

Կօշկարեօվ: Լաւ, լաւ, ես հիմա ինքս ամէն բան գլուխ կը բերեմ. դու թող, գնա — մենք էլ քեզանից կարիք չնենինք:

Ֆելլա: Ո՞նց թէ: Զը լինի՞ դու ինքդ ես ուղում պսակը գլուխ բերել:

Կօշկարեօվ: Ի՞նքս, ի՞նքս. միայն ինքրեմ դու էլ մի խանութիլ:

Ֆելլա: Այ անամօթ: Աղջիկ մարդի տախ ի՞նչ տղամարդի գործ է: Զեռք քաշիր, եղբայր:

Կօշկարեօվ: Գնա, գնա: Գլուխով ոչինչ չի մտնում, մի խանութիլ: Ամեն մարդ թող իր գործին կենայ<sup>1)</sup>, քաշուիր, կորիր:

Ֆելլա: Անխիղճ, անաստուած. էնքան լինի,

<sup>1)</sup> Աղաւազուածը սեկլեսար (ասոենազպիր) խօսքի:

<sup>1)</sup> Բնագրում ուստական առածն է. „Յու շերչու տակ առածուկ”.

մարդի բերանի հացը կտրես: Ենպէս կեխառոս գործի  
մէջ քիթ է խցկում: Եթէ ես իմանայի, ոչինչ էլ չէի  
պատմիլ: (Քարկացած դուրս է զնում:)

### ՏԵՍԻԼ ԺԱ.

Պօղկալեօսին և Կօչկարեօվ

Կօչկարեօվ: Դէս, եղբայր, գնանք, այս գործը յիշ-  
տաձդել չի կարելի:

Պօղկալեօսին: Ախար, դեռ ոչինչ չը կայ, ես դեռ  
հէնց էնպէս... միմիայն մտածում էի:

Կօչկարեօվ: Ոչինչ, դատարկ քան: Միայն թէ գու-  
շամաշես, չը քաշուիս, ես քեզ այնպէս պասկեմ, որ  
ինքդ էլ չը հասկանաս: Մենք, իսկոյն և իսկ, կեր-  
թանք հարսնացուի մօտ և գու կտեսնես, թէ ամեն  
բան ձեռաց ի՞նչպէս գլուխ կը գայ:

Պօղկալեօսին: Ա՛ռ քեզ տրաքոց: Իսկայն և իսկ  
համ:

Կօչկարեօվ: Ի՞նչ կայ, եղբայր, ընչի՞ յիտաձկնք:  
Ինքդ դատիլ, թէ ի՞նչ հալումն ես, ի՞նչ է քո դրու-  
թիւնը, որ կին չունիտ Լաւ տնաղիր քո սենեակը՝  
ի՞նչ օրումն է, այստեղ՝ անսրբել կօշիկ է ընկած, այն-  
տեղ՝ լուացարանն է, սեղանիդ վլայ բեռնով թամբա-  
քոյ է ցրիւ անցած, իսկ ինքդ արջի նման չլայ ես  
մտել ու ողջ օրը մի կողքի փառում:

Պօղկալեօսին: Այդ մէկն ուղիղ է. ինձ յայտնի է,  
որ իմ տանս կարգ ու կանոն չը կայ:

Կօչկարեօվ: Իսկ երբ կին կունենաս, որու ինքդ այն  
ժամանակը չես ճանաչիլ քո տունդ, այս տեղ՝ բազմո-  
ցը կը լինի դրուած, այնտեղ՝ շնիկը, վանդակում՝ եր-  
գիչ թռչնիկը (ԿԱԿԻԿԵ) կը լինի կախուած, ձեռագործը  
մի կողմ... Հիմա երևակայիր՝ ձգուած ես բազմոցի

վրայ, մէկ էլ՝ կողքդ կտրեց մի ջանէլիկ կին, մի սի-  
րունիկ՝ իր պստիկ ու փափլիկ ձեռքով սկսեց քեզ...

Պօղկալեօսին: Այս, սատանէն տանի. մարդ երբ  
մտածում է էղ փոքրիկ ձեռների մասին... տեղն ու  
տեղը կաթը քեզ օրինակ:

Կօչկարեօվ: Դեռ ո՞ր տեղ ես: Թու կարծիքով՝ նրանցը  
միայն ձեռքերն են... Նրանք, եղբայր, ունին... Է՞ն,  
ի՞նչ եմ ասում, սատանան գիտէ, թէ նրանք ի՞նչ ու  
ընչի՞ չունին:

Պօղկալեօսին: Մեղքս ի՞նչ թագյնեմ, հոգիս փա-  
ռաւորում է, եթէ կողքիս մի գեղեցկուհի է նստած  
լինում:

Կօչկարեօվ: Տեսնում ես, կտուցդ քաղցրացաւ: Հի-  
մի մնում է, որ գործը կարգի գնենք: Դու ոչնչի հոգս  
մի քաշիլ: Պասկաճաշ է, թէ ի՞նչ է, այդ բոլորն ես  
կանեմ... Շամպանիոյ գինին մի դիւժինից պակաս՝  
ուղես, չուղես, եղբայր, անկարելի է: Կէս դիւժին մա-  
գերը, նմանապէս, անհրաժեշտ է: Հարսնացուն, երեխ,  
բեռներով հօրաքոյր՝ մօրաքոյրներ ու սանամայրեր  
կունենայ. Նրանք կատակ անել չեն սիրում: Իսկ թէնի  
գինին՝ է՞ն, քարն իր գլուխը, պէտք չէ. լաւ չեմ ա-  
սում: Իսկ ճաշի պատրաստութեան համար՝ ես աչքիս  
առջև ունիմ մի պալտատական սեղանապետ (օֆիցիանտ.),  
անպիտանն այնպէս կուտացնի, կը տկզացնի, որ տեղի-  
ցը շարժուել չեմ կարող:

Պօղկալեօսին: Խիզ ունեցիր. դու էնպէս ես տաք  
տաք կպել, կարծես ուղիղ հարսանիքը դրանն է:

Կօչկարեօվ: Եւ ընչի՞ լինի: Ընչի՞ յիտաձկնք,  
Զէ՞ որ դու ինքդ համաձայն ես:

Պօղկալեօսին: Ե՞ս... Ա՛չ, ոչ... ես գեռ այնքան էլ  
համաձայն չեմ:

Աօչկարեօվ: Ա՛ռ քեզ տրաքոց: Դու չէի՞ր, որ այս  
ըրպէին համաձայնութիւնդ յայտնեցիր:

Պօդկալեօսին: Ես միայն ասացի, որ վաստ չէր լի-  
նիւ:

Աօչկարեօվ: Աստուածդ միտդ բեր, եղբայր, մենք  
ամեն բան, համարեա... Եւ ի՞նչ է, մըթէ ամուսնական  
կեանքը քեզ դուք չի գալիս:

Պօդկալեօսին: Ո՛չ, դուք է գալիս:

Աօչկարեօվ: Ուրեմն էլ ի՞նչ, ի՞նչն է արգելը:

Պօդկալեօսին: Արգելը ոչի՞նչ չը կայ: Բայց մի  
փոքր խորթ բան է, որ...

Աօչկարեօվ: Ի՞նչ խորթութիւն կայ:

Պօդկալեօսին: Ի՞նչպէս թէ խորթ չէ. մինչև օրու  
կին չունէի և հիմա յանկարծ՝ կնոջ տէր...

Աօչկարեօվ: Դէս... դէս, ամօթ չէ քեզ համար: Ո՛չ  
ես տեսում եմ, որ քեզ հետ հարկաւոր է, ուրջ խօսել:  
Ես հետդ խօսելու եմ պարզութեամբ՝ ինչպէս հայրը  
ուբառ հետ: Հապա նայիր, ուշադրութեամբ վրադ նա-  
յիր, օրինակ՝ ինչպէս հիմի ինձ ես նայում: Հիմա ա-  
սա, հիմա դու ի՞նչ ես:—Ոչի՞նչ: Նշանակութիւնդ կոր-  
ցրած մի ծառի կոճղ: Ասիր դու հիմա ընչի՞ համար ես  
ապրում: Հայելուն մտիլ տուր, ի՞նչ ես տեսնում: Մի  
գմբօ ու յիմար պատկեր, ուրիշ ոչի՞նչ: Այժմ երեակա-  
յիլ՝ չորս կողմդ երեխայք են շարուած, երկուսը, կամ  
երեքը չըկարծեա, կարող է պատահել վեցը միասին, և  
բոլորը՝ միջիցն երկու կէս արած, կարմիր խնձորի  
պէս քեզ նման<sup>1)</sup>: Այսօր դու մի հատիկ ես, նադ յօրնի  
սովորնիկ ես, երապելուոր ես, կամ ինչ որ մեծաւոր ես,  
Աստուած գիտէ, թէ ի՞նչ ես, իսկ այն ժամանակը՝ մէկ

<sup>1)</sup> Բնապրում ուսական ասւուածքն է. նման ինչպէս երկու  
կաթիւ ջուր (Կաև ան կապա воды.)

Երեակայիր՝ շուրջդ մանր-մանը երսպելիտօրներ, չարա-  
ձձիկներ՝ միւս կողմից էլ՝ մի սատանի ձագ թաթիկը  
կը մեկնի, մօրուքդ թափէ թափ կըտայ. իսկ դու մի-  
այն կոկսես շան նման հափ, հափ, հափ: Հիմա ինքդ  
ասա՞ սրանից լու ի՞նչ կայ:

Պօդկալեօսին: Ակր չեմ իմանում՝ էլ երեխայքն  
ի՞նչ չարերն են, ի՞նչ պէծերն են. ամեն բան կը փշաց-  
նեն, թղթերը ցրիւ կըտան:

Կօչկարեօվ: Թող չարութիւն անեն, բանն այս է,  
որ բոլորը քեզ են նման:—Այ լազաթը:

Պօդկալեօսին: Իրաւ, որ շատ ծիծաղելի է. ինքը  
մի մատն երեխայ, մի ճղճան լակուս, էն էլ քեզ է նը-  
մանում:

Կօչկարեօվ: Ի հարկէ ծիծաղելի է: Դէս, ուրեմն,  
գնանք:

Պօդկալեօսին: Ի՞նչ արած, գնանք:

Կօչկարեօվ: Էյ, Ստեփան, շուտով ըս ազայի շո-  
րերը քեզ, թող հագնի:

Պօդկալեօսին: (հայելու զիմաց նախուելով): Ես կար-  
ծում եմ, այսու ամենայնիւ, որ հարկաւոր է սպիտակ  
բաճկոն հագնել:

Կօչկարեօվ: Դատարկ բան, միենայն է:

Պօդկալեօսին: (օձիք կապելով): Անպիտան լուա-  
ցարարունի, ի՞նչպէս վաս է օսլայել օձիքս, ամենսին  
ուղիղ չի ձգւում: Դու էն կողջը կասես, Ստեփան, որ  
եթէ յիմարն իմ փոխորդներս էսպէս կարթուկէ, ես  
ուրիշն կըվարձեմ: Նա, երկի, սիրաբանութիւններով  
է պարապած և ոչ թէ փոխորդներ յզկելով:

Կօչկարեօվ: Դէս, շուտ, եղբայր, քանի՞ մլուլ անես:

Պօդկալեօսին: Իսկնյան, իսկնյան: (Ֆրակը հագնում,  
նստում է): Լսիր ինձ, իլիս ֆօմիչ: գիտես ի՞նչ արի,  
դու ի՞նքդ գնան:

Կօշկարեօվի: Ա՛ռ քեզ բան: Գժուեցի՞ր ինչ է: Ե՞ս գնամ: Մեղանից ո՞վ է պասակուողը՝ Բ՞ո՞ թէ դու:

Պօդկալեօսին: Ուղիղն ասած՝ սիրու չի քաշում. արի՝ էգուցուան թողնենք:

Կօշկարեօվի: Հիմա քո գլխումը խելքի նշոյլ կայ. հիմա դու տիմար չես: Բոլորովին պատրաստ տընկուած ես և յանկարծ՝ հարկաւոր չի: Խնդրեմ ասես՝ խոզի գլուխ չես, անպէտք ու անազնիւ չեն հիմա դու:

Պօդկալեօսին: Ել ընչի ես հայհոյում, մեղքս ի՞նչ է, քեզ ի՞նչ եմ արել:

Կօշկարեօվի: Յիմար, դդմազլուխ յիմար, տեղիցը վեր կենողն էս խօսքերով քեզ կասի: Տիմար, կատարեալ տիմար, թէկուզ և էքսպերտոր: Ախար, ես ընչի համար եմ չարչարւում:—Քո օգտի համար: Ախար բերանիցդ պատառը գուրս կը բաշեն: Վայր է ընկել անիծածն անկին, անընտանիք: Ասա, խնդրեմ, ընչի ես նման: Անպիտան ես, անպիտան, փալան ես, փալան: Ի՞նչ անեմ, բերանս ուրիշ խօսք է գալիս, բայց վայել չէ: Գլխիդ լաչակ է, կինարմատից էլ վատթար ես:

Պօդկալեօսին: Դու ինքդ էլ մի բարի պտուղ չես: (կիսաձայն) գլխիդ մազաշափ խելք կայ. ստրուկ ծառան առջել կանգնած, ինքը նրա մօտ հայհոյանք է թափում էս էլ ի՞նչ խօսքերով: Ուրիշ տեղ չը դուաւ. բերանը ցրիւ տալու:

Կօշկարեօվի: Ասա, խնդրեմ, ի՞նչպէս չըհայհոյիմ քեզ: Ո՞վ կարող է քեզ չը հայհոյել ո՞վ կը համբերի, որ չը հայհոյի: Օրինաւոր մարդի պէս վճռեց ամուսնանալ, լսեց խելացի խօսքը, և յանկարծ, գլուխն ի՞նչ քամի մտաւ՝ ոնց որ գիտ հաց կերած մարդ: Անտաշ քօթուկ...

Պօդկալեօսին: Հերիք է, գալիս եմ. ի՞նչ ես ձայնդ աշխարհովը մէկ արել:

Կօշկարեօվի: Գալիս եմ: Իհարկէ, պիտի գաս, չեկած՝ ի՞նչ պիտի անեա: (Ստեփանին) Սրա գտակն ու վերաբկուն բեր:

Պօդկալեօսին: (դրան մէջ տեղը). Տարօրինակ մարդ է սա... հետը վեր ու նիստ անել չի կարելի. յանկարծ՝ տեղի անտեղի կսկսի խայտառակել. վարուել ամենկեն չի հասկանում:

Կօշկարեօվի: Իհարկէ, հիմա էլ չեմ հայհոյիլ: (Նրկուսով գնում են:)

### ՏԵՍԻԼ ԺԲ.

#### ՍԵՅԻՆԱԿ ՍՊԱԹԵԱ ՏԻՒԽԱՎԱՅԻ ՏԱՆՐԻ

Ագաթեա Տեխոնովինա: Խաղաթղթերով վիճակ է բաց անում. կողքից նայում է իր հօրաքոյր Արինա Պանտելեյմոնովնան:

Ագաթեա Տեխոնավինա: Էլի՛, հօրաքնյր, ճանապարհ բացուեց. մի ինչ որ քարփիմի (աղիւս) թագաւոր ընկել է քամակիցն ու ձեռք չի քաշում... արտասունք... սիրահարական նամակ... ձախ կողմից՝ խաչի թագաւորն է բան ու գործը թողած՝ մէջ խառնուում, բայց կապը կտրած մի կիս արգելում է:

Արինա Պանտելեյմոնովինա: Քո խելքովը՝ խաչի թագաւորն ո՞վ կը լինի:

Ագաթեա Տիխոնովինա: Զը գիտեմ:

Արինա Պանտելեյմոնովինա: Իսկ ես գիտեմ:

Ագաթեա Տիխոնովինա: Ո՞վ է:

Արինա Պանտելեյմոնովինա: Ալէքսէլ Դիմիտրովիչ Ստարիկովը, էս պատուական վաճառականը, որ մահուած ծախողների շարքումն առուտուր ունի:

Ագաթեա Տիխոնովինա: Զէ, երկում է, որ նա չէ: ընչով կուգես՝ մարճ կը գամ, որ նա չէ:

Արինա Պանտելեյմոնովնա: Մի հակառակի, Ազա-  
ֆեա Տիխոնովսա, շէկ մազաւորը նա է: Ել ուրիշ խա-  
չի թագաւոր չըկայ:

Ազաֆեա Տիխոնովնա: Հենց էդ է՝ որ չէ, էստեղ  
խաչի թագաւորը նշանակում է ազնուական: Վաճառա-  
կանն ով, խաչի թագաւորն ով. եօթն օրէն ձամպայ  
իբարից հնոու են:

Արինա Պանտելեյմոնովնա: Ա՛ս, Ազաֆեա Տիխո-  
նովսա, զու էպէս հօ չէիր խօսիլ, թէ որ քո լուսա-  
հոգի հայրդ՝ Տիխոն Պանտելեյմոնովիչը կենդանի լի-  
նէր: Մի օր կար՝ լսի բաժինը հինգ եղբայրը (ծեռքը)  
վրայ էր բերում սեղանին թրիկացնում ու գոռում.  
«Թքեմ ես, ասում էր, էն մարդու երեսին, որ ամօթ  
կը համարի վաճառական դառնալը, բոլորովին, ասում  
էր, ես իմ աղջկանս գնդապետի չեմ տալ: Ուրիշները  
թող էդ բանն անեն: Իմ տղիս էլ, ասում էր, ծառա-  
յութիւնի չեմ տալ: Ի՞նչ է որ, ասում էր՝ մի՞թէ վաճա-  
ռականն էլ, ուրիշների պէս թագաւորին չի ծառա-  
յում:» Ասում էր ու հինգ մատլ բուռնցը արած՝ սե-  
ղանին թրընկ. իսկ նրա ամէն մի ձեռը մի մին ջրի  
բաղիա<sup>1)</sup>. սարսափ էր բանում: Ուզիղը որ խօսենք՝ նա  
էր, որ հանգուցեալ մօրդ կորկուն եփեց, շաքարի պէս  
հալցրեց, թէ չէ լուսահոգին գեռ շատ երկար կապրէր:

Ազաֆեա Տիխոնովնա: Էդ է հա, որ ես էլ էնպէս  
կատաղած մարդ ունենայի: Ո՛չ մի ժամանակ ես վա-  
ճառականի չեմ գնալ:

Արինա Պանտելեյմոնովնա: Ալեքսէյ Դիմիտրիիվիչը  
հօ էնպէս մարդ չի:

Ազաֆեա Տիխոնովնա: Զեմ ուզում, չեմ ուզում:  
Մէկ էլ նրա մօրուքը: Ուստեղուա կիրակուրը մօրուքիցը

<sup>1)</sup> Բնագրումը՝ գոլլ, Յօդ.

ծլծլալով թափւում է: Ո՛չ, ոչ, չեմ ուզում:

Արինա Պանտելեյմոնովնա: Մխար, լաւ ազնուոր-  
դին որ տեղ ես ծաբում. փրզոցներումը հօ չեն թափ-  
ուած:

Ազաֆեա Տիխոնովնա: Ֆեկլա իվանովսէն կը ճա-  
րի, նա ինձ խօսք է տուել մի ազնուական գտնի, որ  
հատը չը լինի:

Արինա Պանտելեյմոնովնա: Քո Ֆեկլա իվանովսէն,  
աչքիս լոյս, տեղն ու տեղը ստախօս է:

Տեսիլ, ԺԳ.

Դոյնե եւ Ֆեկլա:

Ֆեկլա: Զէ, Արինա պանտելեյմոնովսա, զնւը ես  
բամբասանք անում: հոգուդ մեղը անում:

Ազաֆեա Տիխոնովնա: Ֆեկլա իվանովսէն է հա:  
Դէն ասա, խօսիր, պատմիր: Ուսի՞ս:

Ֆեկլա: Ուսիմ, ունիմ, բայց ախար թող մի փոքր  
շունչ քաշենք, հոգիս գուրս է եկել: Քո գործի համար՝  
տուն չեմ թողել, ոտնատակ եմ տուել, կանցելեաներում  
ու մինիսարներում եմ թրե եկել, պահապանների տնակ-  
ներին եմ թինկը տուել, մնացել... գիտես, մէրս՝ Աս-  
տըծու անունով եմ երգում ուտում, քիչ մնաց՝ ինձ  
զնդում էին: Ոքերովներին տնաւորացնող պառաւը  
կպել էր ու պոկ չէր գալիս. «Այ զու էսպէս ու էնպէս,  
ասում էր, զնա քո թաղը ձանաչիր, ի՞նչ ես ուրիշի  
հացը յափշտակում» Օ՛, եթէ լիմանսա՝ ի՞նչ փեսացու-  
ներ եմ պատրաստել քեզ համար, աշխարհի ստեղծե-  
լուց մինչև օրս, մինչև վերջն էլ դեռ էսպէսները ոչ  
եկել են, ոչ կը լիմին: Օրն էսօր՝ ուրիշներն էլ պիտի  
գան: Ես շտապեցի, տուն ընկայ, որ քեզ իմաց տամ:

Ազաֆեա Տիխոնովնա: Ի՞նչ, ի՞նչ, հէնց էսօր: Հո-  
գիս, Ֆեկլա իվանովսա ես վախենում եմ:

Ֆեկլա: Երկիւղ էլ մի քաշել, մէրս, աշխարհքու է էսպէս. կը գան, կը տանտղեն—ուրիշ ոչինչ: Դու ինքդ էլ նրանց կը տանտղես, չես հաւանիլ՝ կը թողան, կերթան:

Արինա Պանտելյոնովնա: Յոյս ունիմ, որ լաւերի գլուխները կը ինիս, իւղ քսել, մեզ քաշել:

Ազաֆեա Տիխոնովնա: Շատո՞ւ են, քանի՞ հոգի կը լինեն:

Ֆեկլա: Մի վեց հոգի կան:

Ազաֆեա Տիխոնովնա: (Ճ'չ արձակեր): Ա՛խ:

Ֆեկլա: Ի՞նչ վեր թռար, մէրս, ընտրելը շատ լաւ է. մէկը չի յարմարուիլ, մէկէլը ձեռք կը տայ:

Ազաֆեա Տիխոնովնա: Ո՞վ են, ի՞նչ են, ազնուականներ են:

Ֆեկլա: Բոլորն էլ ընտրովի ազնուականներ, դեռ մինչև օրս զրանց հատը չի եղած:

Ազաֆեա Տիխոնովնա: Ախար ընչեր են, ի՞նչպէս ներ են:

Ֆեկլա: Բոլորն էլ ընտիր ընտիր, լաւ լաւ, շախ ու շուրջով: Առաջինը՝ Բաղդասար Բաղդասարովիչ ժեւակինը, ի՞նչ պատուական մարդ, ի՞նքը ծովի վրայ էր ծառայում. վրադ չափած ձեած է: Նա ասում է՝ որ իր հարսնացուն պիտի լինի տռուզ, ջանաթաթախ, նա ի՞նքը չմքած մրկածներին չի սիրում: Իսկ իվան Պաւլովիչը, որ էցիկուսոր է (էցիկուտօր) մի էսպէս երկելի, բօյով բուսաթով, հաստ ու պինդ տպամարդ է, որ ոչ որ չի համարձակուիլ մօտ զնալ: Էսպէս է վրաս զոռում. —«Ի՞նչ ես զլիիցդ դատարկ—դատարկ դուրս տալիս, ասում է, դու ինձ ճակատի ճակատ ափաշկարայ ասա՝ էն աղջիկն ինչքան շարժական ու անշարժ կայք ու կալուածք ունի»: —Էսքան ու էնքան, իմ պարզն» ասում եմ: —«Սուտ ես ասում, շան աղջիկը: Էս քիչ է»

Ետեից մի էսպէս խօսք էլ կացրեց, որ ամօթ է քեզ մօտ բերանից բաց թողալը: Զեռաց գլխի ընկայ. հա, նա երեւլի աղայ մարդ պէտք է լինի:

Ազաֆեա Տիխոնովնա: Էլ ուրիշ նվ:

Ֆեկլա: Մէկն էլ Նիկանօր իվանովիչ Անուչկինը: Օ՛հ, սա մի քաղցրն է, քաղաքավարին է, պոօչները տեղն ու տեղը մորի է, այ պատուական մարդ: «Հարկաւոր է, ասում է, որ իմ հարսնացուն սիրուն լինի, ուսում առած, փրանգազավար խօսիլ իմանայ»: Հա. հա, շատ խելք ու խրատով մարդ է, Լեմսի արիւն կայ մէջը, ոտները մանր մանր, ի՞նքը բարձկ, շիմշատ:

Ազաֆեա Տիխոնովնա: Զէ, ես էզպէս բարեկամներին... ոչ... խելքումն չեն նստում...

Ֆեկլա: Թէ որ հաստ ու պինդն ես ուզում՝ իվան Պաւլովիչին առ: Նբանից լաւը չես ճարիլ: Դրա դէմ խօսք չունիմ՝ մարդն աղայ է՝ որ կայ, տղամարդ է, որ զորս դու պատուիրեցեր. էս դունովը տուն չի մըտնիլ:

Ազաֆեա Տիխոնովնա: Ի՞նքը քանի՞ տարեկան է:

Ֆեկլա: Զահէլ մարդ է, յիսուն տարեկան կայ... ոչ, ոչ յիսուն գեռ չի լինիլ:

Ազաֆեա Տիխոնովնա: Ազգանունն ի՞նչ է:

Ֆեկլա: Նրա ազգն է իվան Պաւլովիչ եաիչնից (Չուածեղեանց):

Ազաֆեա Տիխոնովնա: Էդպէս է ազգանունը:

Ֆեկլա: Հա, էդպէս է:

Ազաֆեա Տիխոնովնա: Յիսուս ու Քրիստոս. Էդպէս աղդ կըլինի: Հիմի ես որ նրան առնեմ, իմ անունը պիտի լինի Ազաֆեա Տիխոնովիսա Չուածեղեանց: Էդպէս բան կը լինի:

Ֆեկլա: Է՛ է է, մէրիկս, Խուսաստանումն էսպէս ազգեր կան, որ եթէ լսես, կը թքես, կըխաչակնքես

ու երեսդ շուռ կըտաս: ի՞նչ մնաս, եթէ դրա ագքառ  
նունը չեմ հաւանում, առ Բաղդասար Բաղդասարովիչ  
Ժեւակինին, պատուական փեսացու է:

Ազաթեա Տիխոնովինա: Ի՞նչպէս մազել ունի:

Ֆեկլա: Լաւ մազեր ունի:

Ազաթեա Տիխոնովինա: Քիթր:

Ֆեկլա: Ըըք՛... քիթն էլ լաւն է, ամեն բան տեղին է, ինքն էլ համարի մարդ է: Էս մի բանը միայն թող սրափու չառնի, տունը որ մոնես՝ ոչ կահ կարսափը, ոչ կարգ ու սարք: Կայ, չըկայ՝ մի չերտուխից աւել ոչինչ չըկայ:

Ազաթեա Տիխոնովինա: Է՛լի ովկ կայ:

Ֆեկլա: Ակինք Ստեփանովիչ Պանտելէյմոնովը,  
ջնովնիկ է (աստիճանաւոր) տիտուլարնի սովորնիկ է.  
Ինքը մի քիչ կակազ է, բայց շատ պարկեցու, արու-  
սով է:

Արինա Պանտելէյմոնովնա: Դու էլ մի գլուխ կը-  
ցել ես՝ ջնովնիկ ու ջնովնիկ. դու ինձ էսքանն ասա՞  
կոնձիլ սիրում է, թէ չէ:

Ֆեկլա: Հա, խմում է, չեմ հակառակում՝ խմում է:  
Ինչ կայ որ, մարդը տիտուլարնի սովորնիկ է: Բայց թէ  
իմանաս՝ ի՞նչ տաղ արած, ի՞նչ անշառ, ապրշում է,  
ապրշում:

Ազաթեա Տիխոնովինա: Զէ, չէ, ես չեմ ցանկանալ,  
որ իմ մարդս կոնձարան լինի:

Ֆեկլա: Կամքը քոնն է, մէրիկս, մէկին չես ու-  
գում՝ մէկէլին առ: Բայց, դէ, վասն ի՞նչ, եթէ վախտ  
վախտ մի բաժակ աւելի խմի, ողջ շարաթը հօ հարբած  
չի լինում, որ կըպատահի՞ լուրջ էլ կըլինի:

Ազաթեա Տիխոնովինա: Է՛լի ովկ կայ:

Ֆեկլա: Մէկն էլ կայ, բայց էնպէսն է... ըըք՛...  
էն, աւելն իր հետ: Միւսներն աւելի մարդու կարող

են լինիւ:

Ազաթեա Տիխոնովինա: Ախար ովկ է, ի՞նչ մարդ է:

Ֆեկլա: Սիրոս չի բաշում էն մարդի վրայ խոսք  
ու զրուց անիլլ: Ասենք՝ ինքը նադիօրնի սովորնիկ է, օ-  
ձիքի վրայ զառեր ու աստղեր էլ ունի, բայց մինչեւ  
տանիցը դուրս կը հանես, հոգեհան կը լինիս, շատ  
ծանր ու դանդաղն է:

Ազաթեա Տիխոնովինա: Է՛լի ովկ կայ: Սրանք բոլո-  
րը հինգ ևս, իսկ գու ասացիր վեց:

Ֆեկլա: Հերիք չեն: Տեսնում ես, ոնց սիրոտ կը-  
րակ ընկաւ, սկզբումը քիչ մնաց՝ երկիւղից գողդ բըս-  
նում էր:

Արինա Պանտելէյմոնովնա: Է՞ն, ի՞նչ գուրս կը գայ  
էդ քու ազնւորդիքներից, դրուստն ասած՝ վեցը մի  
առուստական չափեն:

Ֆեկլա: Զէ, Արինա Պանտելէյմոնովնա, մի ասէք,  
ազնուականի պատիւն ուրիշ է:

Արինա Պանտելէյմոնովնա: Պատիւս որն է, հրէ,  
Ալէքսէյ Գիմիտրիկիչը սամուր մուշտակը հագնում է  
ու խզակը (սահնակ) թացնում:

Ֆեկլա: Բայց, ախար, ազնուականն ավալիթն ու-  
սերին, քո առուստականի առաջը կըկտրի ու կասի.—  
«Է՛յ, գուքանչի», ճամփից գուրս արի» կամ թէ՝ «Է՛յ,  
դուքանչի, ցոյց տուր ինձ ունեցածդ ամենից թանգա-  
զին մախմուրը»: Իսկ քո առուստուրականը՝ թէ. «հա-  
մեցէք աղայ»:—«Գտակդ վեր կալ, անքաղաքավարի».  
կըգուայ վրէն ազնուականը:

Արինա Պանտելէյմոնովնա: Իսկ առուստուրականը  
ուղենայ՝ մահուտ չի տալ: Մէկ էլ ըհը՛, էս քո ազնուր-  
դին կը մնայ տկլոր, միսը բաց, տանից չի կարող  
դուրս գալ:

Ֆեկլա: Ազնուականն էլ թուրը կքաշի ու առու-

սուրականին կտոր կտոր կանի:

Արինա Պանտելեյմոնովինա: Առուտուրականն էլ կերթայ պօլիցին գանգատ կանի:

Ֆելլա: Ազնուականն էլ սինախորին (սենատօր) կը գնայ գանգատ:

Արինա Պանտելեյմոնովինա: Առուտուրականն էլ զուբերնաթին:

Ֆելլա: Ազնուորդին էլ...

Արինա Պանտելեյմոնովինա: Մուտ է, սուտ ես ասում. գուրերնաթը սինախորից մեծ է: Սրան տես, պարծենում է իր ազնուականովը. տեղն ընկած վախտը՝ քո ազնուականը զլուխն օխտը գազ կրացնում է... (լսում է, դրան զանգակի ձայնը): Կարծես դրան զանգակը քաշում են:

Ֆելլա: Վայ, վայ, նրանք են:

Արինա Պանտելեյմոնովինա: Նրանք ով:

Ֆելլա: Նրանք... փեսացուներից մէկն ու մէկը:

Ազաթեա Տիխոնովինա: (Ճիշ է արձակում). Ա՛խ:

Արինա Պանտելեյմոնովինա: Բարեխօս կացէք, երկընքի սրբեր, անարժան մեղաւորներիս: Մենեակը բոլորովին կարգի չի բերած, ածած թափած է: (Շտապով ժողովում է սիղանի վրայի թափուածներն եւ սինեակի մէջ դէս ու գէն է վաղվզում): Ա՛խ, սեղանի ծածկոցը բոլորովին կեղանուոտ մնջոտ է: Դունեաշկա, Դունեաշկա: (Գունեաշկան գալս է): Շուտ, իստակ սփոռց բեր: (Սփոռց ցած է բաշում ու սինեակում տարուերերում):

Ազաթեա Տիխոնովինա: Ա՛խ, հըրաքնյը, ի՞նչպէս անեմ. համարեա, շապկանց եմ:

Արինա Պանտելեյմոնովինա: Վազիր, գնա շուտ հագնուիր: (Եփոթուած դէս ու դէն է ընկնում սինեակում: Գունեաշկան բերում է սփոռցը: Դրան զանգակը տալիս են:) Շտապիր, ասա—«իսկոյն»: (Գունեաշկան հնոռւից ձայն է տալիս).—«Իսկոյն»:

Ազաթեա Տիխոնովինա: Ախար, հօրաքնյը, շուտ արթուկած չի:

Արինա Պանտելեյմոնովինա: Տէր ողորմած Աստուած, դու հասիր: Ուրիշը հագիր:

Ֆելլա: (Ներս վաղելով): Ընչը չէք գուրս գալիս: Շուտ, հոգիս, Ազաթեա Տիխոնովինա: (Լսում է զանգակի ձայնը): Ախար, մարդն էսքան ժամանակ սպասում է:

Արինա Պանտելեյմոնովինա: Դունեաշկա, ներս կանչիր. ինգրիր, թող նսակի: (Գունեաշկան վագում է հաշորեւ դուրը բաց անում: Լսում են ձայներ):—Ճանն է:—Ճանն է, համեցէք սինեակը: (Բոլորերեան մեծ հետաքրքրութեամբ աշխատում են բանափրի ձակից ներս նայելու): Ազաթեա Տիխոնովինան (Ճում է): Ա՛խ, ի՞նչ հաստ մարդ է:

Ֆելլա: Գալիս է, գալիս: (Բոլորերեան միանգամից ներս են թափում):

### Տեսիլ ԺԴ.

Իվան Պաւլովիչ Խախենցա եւ Գունեաշկա:

Դունեաշկա: Էստեղ սպասեցէք: (Գնում է):

Խախենցա, Ոչինչ, սպասելը կսպասենք, բայց չից թէ ուշանամ. մի բոլուզով միայն զուրս եկայ դեպարտամենտից: Յանկարծ գեներալի խելքին կը փչի ու կհարցնի.—«Ո՞ւր է էգգեկուտորը»—«Գնացել է հարմացու տընտղելու»... Մէկ էլ այնպիսի մի հարմացու կը տայ... Բայց մի անգամ էլ բաժինքի ցուցակն աչքի տակով անց կացնէի: (Կարդում է): «Երկյարկանի քարէ տուն»,.. (աչքերը բարձրացնում է եւ սինեակը տնտղում): Կայ: (Նարունակում է կարգալ): «Երկու ֆլիգել, մէկի հիմքը քար, միւսը փայտից...» է՞ն, փայտէ ֆլիգելը վատն է երեսում: Մի բաց կառք, փորուածքներով զարգարուած. երկու ձիով սահնակ՝ երկու մեծ ու փոքր գորգեր հետը»:

Կարելի է այնպէսներն են, որ կոտրել շպրտելու են պէտք: Իսկ պառաւը հաւատացնում էր, թէ ամենապատռականն են: Թող այդպէս լինի: «Երկու գիւժին արծաթէ գզալ...» Անտարակոյս տան համուք արծաթէ գզախերը կարեսր բաներ են: «Երկու մուշտակ աղուէսի մորթուց...» Հըմմ: «Չորս մեծ և երկու փոքր փետուրի բարձ» (շրթունքները բազմանշանակ սկզբունք է): «Վեց դոյգ մետաքսի և վեց դոյգ չթի շոր, երկու կանացի գիշերային կըկնոց (կապօտ), երկու...» Է՞ն, այս մի տող դը դատարկ բան է: «Փոխնորդներ, անձեռոցիկներ...» Աղջկայ կամքն է, ուզում է այս, թող լինի: Յամենայն գէպս, այս ամէնը հարկաւոր է մի առ մի ստուգել: Այսօր կըխոստանան և տուն, և կառքեր, բայց պսակուցիքը թէ ոչ, տեղը կը մնան բարձ ու անկողին: (Նըստում է զանգակի ծայս: Դաւնեաշկէն սենեակի միջով քրտնամած վալում է, դուռը բանում: Լսում են ծայներ: Տա՞նն է:—Տա՞նն է:)

ՏԵՍԻԼ ԺԵ.

**Թագան Պաւլովիչ և Անուշին:**

Դաւնեակա: Էստեղ սպասեցէք: Հիմա դուրս կը գան: (Գնում է: Անուշինն ու Եաիչնիցան մշմանց ողջունում են): Եաիչնիցա: Բարի ձեզ:

Անուշին: Արդեօք տանս գեղեցկուճի տանտիկնոջ հօր հետ պատիւ ունիմ խօսելու:

Եաիչնիցա: Ո՞չ բոլորպին: Ես հայր չեմ, երեխաներ անդամ չունիմ:

Անուշին: Ա'խ, սերեցէք, խնդրեմ:

Եաիչնիցա: (Առանձին): Այս մարդի զէմքի գծագրութիւնն ինձ փոքր ինչ կասկածելի է թւում. կարծես, առ էլ նոյն գործի համար է եկել, ինչ որ ես: (Քարձոր): Դուք, երեխ, այս տանտիկնոջ հետ կարեսր գործ ունիք:

Անուշին: Ո՞չ, ի՞նչ գործ... ոչինչ կարեոր գործ, չենց այնպէս, զուրս էի և կեկ զրօննելու և ներս մտայ: Եաիչնիցա: (Առանձին): Սուտ է, շատ սուտ է, զրունելու էր զնացել: Անիծուածը պսակուելու միաբ ունի: (Լսում է զանգակի ծայս: Գունեաշկէն սենեակի միջով վաղում է դուռը բանալու: Հաշտից ծայներ ևն լսում: Տա՞նն է:—Տա՞նն է:)

ՏԵՍԻԼ ԺԵ.

**Դոյգ և Ժենավեին (Դաւնեակակի ևն միասին):**

Ժենակին: (Դունեաշկէն): Խնդրեմ, սիրելիս, սրբիր շրերս... փողոցում վրաս զլուխս բոլորպին փոշուուեց: Խնդրեմ այդ փետուրը վերցնես: (Երշւում է): Այդպէս: Շնորհակալ եմ, հոգեակս: Եայիր, կարծեռ մի սարդ բարձրանում է վրայովս: Իսկ ետեի կողմից փեշերքի վրայ ոչինչ չըկայ: Շնորհակալ եմ, սիրելիս: Այս, այստեղ էլ, կարծեմ: (Չորսվ ուղրում է Զբակի թեւը և այրի տակով նայում է: Անուշինն և Խվան Պաւլովիչն): Գիտե՞՞ս Խնդրիզի մահոււմ է: Օ՞ն, որքան զիմացկուն է. 95 թուին երբ մեր էսկազը (նաւախումը) Սիկիլիայումն էր, միման<sup>1)</sup> ժամանակս եմ էս մահոււտը զնել և մունդոր կարել առեւ: 801 թուին Պաւլ Պետրովիչի օրով՝ ես լիտինանտ<sup>2)</sup> դարձայ: Էս մահոււտը բոլորպին նոր էր: 814 թուին ես ճանապարհորդեցի աշխարհի շուրջը. այն ժամանակ միայն մունդիիս կարերի բուրդը փոքր ինչ սկսեց թափուել: 815 թուին պաշտօնաթուղ նեյայ և նոր շուռ տուի: Տասը տարի է հուդուում եմ և գեռ համարեա, նոր է: Շնորհակալ եմ, հոգեակս... ըըը... իմ... ըըը... նաշխունիկս: (Մասնաւով օրացին համշոյ է տալիս և մօտնալով հայելու իր մազերը կամաց խառնչում է):

<sup>1)</sup> Ծովալին սպազի ասածին աստիճանը:

<sup>2)</sup> Ծովալին սպազի երկուորդ աստիճանը:

Անուշկին: Ներեցէք, խնդրեմ, հրամանքդ ասացիք՝  
Սիկիլիա... այդ Սիկիլիան ի՞նչպէս տեղ է, լաւ երկիր է:  
Ժեւալին: Հիանալի՛ տեղ: Մենք այնտեղ մնացինք  
երեսուն և չօրս օր. տեսաբանը, հրամանոցդ ասեմ  
միանգամայն սքանչելի էր. այս կողմը՝ լեռներ, այն  
կողմը՝ նուն ծառ, իսկ ամենուրեք՝ իտալուհիք, կար-  
մրաթուշիկ, քնքուշիկ: Մարդ ուզում է բռնել ու համ-  
բուրել:

Անուշկին: Եւ լաւ կրթուած են:

Ժեւալին: Պատուակն կըթութիւն, այնպիսի  
կրթութիւն, որ մեր կոմսունիքը հազիւ ունեն: Պատա-  
հում է՛ փողոցով անց էիր կենում—ինչ ասել է հար-  
կաւոր՝ Խուսի լշունանու ես, այս տեղերիդ փայլում են  
էպօլետները, ոսկի ժապաւէնները (մատնացոյց է անում իւր  
ուսերը), մէկէլ՝ մտիկ ես տալիս, ահա թխաչեայ գե-  
ղեցկունիք—զիսէք, ախար, նրանց երկրումն ամեն  
տուն ունի փոքրիկ պատշգամքներ. իսկ կտուրները՝  
այս յատակի պէս հարթ հաւասար: Նայում ես՝ ի՞նչ ես  
տեսնում, նստած է սիրունիկի մէկը... ինքն ըստ ին-  
քեան հասկանալի է, գլուխդ ցեխի հետ չըհաւասարե-  
լու համար... (Գուխ է իջեցնում եւ ծերոն օդի մէջ լայն տա-  
րածում) Իսկ նա՝ մեր գեղեցկունին... ահա այսքան մի-  
այն (ծերով չարծում է անում): Եւ, իհարկէ շքեղ հագ-  
նուած, այս տեղում՝ յարմարացրած ունի մի տեսակ բե-  
հեզի զարդ, այն տեղում՝ մի բարակ ժապաւէն, զանա-  
զան գինդեր... մի խօսքով՝ բերանիդ ջուրը գնում է:

Անուշկին: Ներեցէք, մի հարցունք էլ տամ. Սիկի-  
լիայում ի՞նչ լեզուով են խօսում:

Ժեւալին: Ի հարկէ, ընական է, որ բոլորեքեան  
գաղղիերէն:

Անուշկին: Ուրեմն օրիորդներն ընդհանրապէս  
գաղղիերէն են խօսում:

Ժեւալին: Անպայման բոլորը: Կարելի է դուք չէք  
անգամ հաւատու, ինչ որ պիտի ասեմ, երեսուն և չորս  
օր մինք մնացինք Սիկիլիայում և այդ բոլոր ժամա-  
նակն ես նրանցից ոչ մի ուստերէն խօսք չըլսեցի:

Անուշկին: Եւ ոչ մի խօսք:

Ժեւալին: Եւ ոչ մի խօսք: Թուղնենք նրանց աղ-  
նուականներին և զանազան սինեօրներին, որ միեւնոյն է,  
թէ նրանց այլ և այլ սպաններին. վերցրէք, հէնց՝ այն-  
աեղի հասարակ ուսմիկ գեւղացուն, որ ինչ ասեա՞ շա-  
լակներին քարշէ քարշ են տալիս. հապա փորձեցէք  
նրանցից մէկին ասացէք. «Ի՞ կտոր հաց տուր ինձ սի-  
րելին»—չի հասկանում, երդուում եմ Աստուծով՝ չի հաս-  
կանալ: Իսկ ասա փրանսերէն լեզուով. «Dateci del pa-  
ne» կամ ասա՝ «portate vino!», իսկոյն կըհասկանայ և  
կըվաղի ու կըբերի:

Իվան Պաւլովիչ: Ի՞նչպէս, ես կարծում եմ, այդ  
Սիկիլեան շատ հետաքրքրական և ուշագրութեան ար-  
ժանի երկիր պիտի լինի: Օրինակ՝ դուք ասացիք—ուս-  
միկ: Ի՞նչ է նրանց ուամիկը, ի՞նչպէսն է. նա էլ մեր  
ուսւ ուամիկ պէս է, ուսերը լայն լայն. յետոյ՝ նրանց  
ուամիկն երկրագործութեամբ պարապնում է, թէ ոչ:

Ժեւալին: Ասել չեմ կարող, չեմ նկատել՝ վար ու  
ցանքս անում են թէ ոչ. զալով նրանց քթախոտ (բուռ-  
ուօթի) քաշելուն, արդ անեմ հրամանոցդ՝ բոլորեքեան  
ոչ միայն քաշում են, այլև պոշների տակերին պահում  
են: Մի տեղից միւսն ատպանք տեղափոխելն էլ էժան  
է նստում: Այստեղ բոլոր տեղ, համարեա, ջուր է, ա-  
մէն կողմը գննդուներ... Եւ ահա, նստած է մի խտալուհի,  
մի կարմրաթուշիկ, ոտից գլուխ կոկուած. կըծկալը,  
թաշկինանկը... Միայն մինք չեխնք, մեղ հետ կային և  
անզլիական սպաներ, թէ նրանք, թէ մենք ծովային  
պաշտօնեաներ էինք..., դեռ առաջ ու առաջ՝ ի հարկէ,

շատ խորթ էր թւում, իրար չէինք հասկանում, բայց վերջը՝ երբ միմեանց լաւ ծանօթացանք, սկսեցինք մէկ մէկի ազատ հասկանալ: Օրինակ՝ մատով ցոյց ես տառիս շիշը, կամ բաժակը—իսկոյն, ի հարկէ, գիտես, որ այդ նշանակում է կոնծարանել. կամ ձեռքդ բռունցք ես անում, բերանիդ մօտեցնում և պոշներով փռափ փուփ անում, իսկոյն հասկացւում է, թէ ծիսել ես ուզում: Առհասարակ, հրամանոցդ ասեմ՝ բաւականին նեշտ լեզու է.—մեր նաւաստիքն երեք օրուայ մէջ կարողացան իրար բոլորովին հասկանալ:

Իվան Պալովիչ: Ես, ինչպէս տեսնում եմ, օտառութեան մէջ կենաքը շատ հետաքրքրական է: Ես շատ ուրախ եմ, որ հանդիպեցի մի փորձուած ու աշխարհ տեսած մարդի: Ներեցէք հարցնել՝ ում հետ բաղդ ունիմ խօսելու:

Ժեւակին: Պաշտօնաթող լէյտինանտ Ժեւակին: Թոյլ տուէք իմ կողմից ևս հարցնել, ում հետ բաղդ ունիմ խօսակցելու:

Իվան Պալովիչ: Եզրեկուտօրի պաշտօնակատար իշխան Պալովիչ եաիչնիցա:

Ժեւակին: (Լաւ ըլսելով): Այս, ես ինքս փոքր ինչ նախաճաշել եմ. գիտէի, որ ծանապարհն երկար էր, հղանակն էլ ցուրտ էր: Մի քիչ հաց ու ձուկը կերայ:

Եաիչնիցա: Ոչ, կարծեմ, ասածս այնպէս չը հասկացաք. եաիչնիցա իմ ազգանունն է,

Ժեւակին: (Գլուխ իջեցնելով): Այս, ներեցէք, ես ականչից փոքր ինչ ծանը եմ: Հաւատացէք, ես այնպէս հասկացայ, թէ հրամանքդ ասացիք, թէ ձուածեղ էք վայելել:

Իվան Պալովիչ: Ի՞նչ արած, ես կամենում էի մեր գեներալին խնդրել, որ թոյլ տայ ինձ եաիչնիցին (Զուածեղնաց) գրուելու. միայն մեր տղայքը ըլթողին. ասացին՝ կը հասկացուի ինչպէս «собачий съицъ» (Շանորդեանց):

Ժեւակին: Միշտ այդպէս պատահում էր. մեր ամբողջ երրորդ նաւախումբը, մեր սպաները, մեր նաւաստիները բոլորեքեան խորթ և օտարութի ազգանուններ ունէին—օրինակ՝ Պամոյկին (Ծոխանքաջրանց, Եարիմկին (Քառանեանց), Լէյտինանտ Պերեպրէվլը (Քարշահուեանց)): Իսկ մի միջման ունէինք, մի լաւ միջման, որի ազգանունն էր, գիտէք ինչ.—Դիրկա (ծակ): Պատահում էր, որ նաւապետը յանկարծ ձայն էր տալիս. «Էյ, գու, Դիրկա, այստեղ արի» և համարեա անդադար ծալըրում էր և ասում. Էյ, գու Դիրկա: (Հաշտից զանդակի ճայն է լուռմ: Ֆեկլան սենեակի միջով վագում է դուռը բանալու):

Եաիչնիցա: Ասա, բարե՛ մայրիկ:

Ժեւակին: Ի՞նչպէս ես, սիրելիս, բարե՛ քեզ:

Անուչկին: Բարե՛ Ֆեկլա Իվանովսկա:

Ֆեկլա: (Քրտնամիած վագում է): Շնորհակալ եմ, պատուելիք, առնդջ եմ, լաւ եմ: (Բանում է դուռը: Հաշտից ճայներ են բարձրանում): Տանին է,—Տանն է: (Յետոյ լսում են մի քանի ցած շշունքեր: Ֆեկլան նրանց բարկացած պատախանում է): Տես ի՞նչ պտուղ են:

Տեսիլ ժէ.

Նոյնի, Կօչկարեօվ, Պօգկալեօսին եւ Ֆեկլա:

Կօչկարեօվ: (Պօգկալեօսինին): Վասահ կաց, ուրիշ ոչինչ: (Շուրջն է նայում եւ մի տեսակ զարմանքով սրան նրան զլուի իջեցնում եւ ինքն իրան փնտինթում): Այս ո՞րքան բազմութիւն: Այս ի՞նչ է նշանակում: Զըլինի՞ վեսարագմութիւն: Այս ի՞նչ է նշանակում: Զըլինի՞ վեսարագմութիւն: (Հրում է Ֆեկլային եւ կամաց ասում): Այս ագռաւներին ո՞րտեղից ես հաւաքել:

Ֆեկլան (Կիսածայն) էստեղ քեզ համար ագռաւներ չըկան, սրանք բոլորն աղնիւ մարդիկ են:

Կօշկարեօվ: (Յեղային): Հիւրերդ էլ հիւրեր լիւնին, մեծատներ, քաղցած ջներ<sup>(\*)</sup>;

Ֆեկլա: Թու էլ շատ մի փրուիլ, սոված ձաշին ես քնում<sup>(\*\*)</sup>;

Կօշկարեօվ: Թո պարոններն են շատ լաւը, բոլորի ջիբերումը միներ են պար զալիս: (Բարձր) Իսկ ինչ բանի է այժմ հարսնացուն: Երեխ, այս նրան ննջարտնի դուռն է: (Մոտենում է դասնը);

Ֆեկլա: Ամօթ չունիս, քեզ ասում են՝ դեռ հաղում է:

Կօշկարեօվ: Այ մեծ ցաւ. Ի՞նչ վնաս, միայն նաև յեմ, ուրիշ ոչինչ: (Նայում է բանալու ծակով):

Ժեւակին: Թոյլ տուէք, խնդրեմ ես էլ աչքի տակով մէկ նայեմ:

Եաիչնիցա: Ինձ ես թոյլ տուէք մի անգամ նայելու: Կօշկարեօվ: (Նարունակիլով մտիկ տալը): Ոչինչ չերեւում, պարոններ, մի ինչ որ բան սոլիտակին է տառիս, չի նկատում: Իին է, թէ բարձ: (Բոլորերեան, առկայն, շուրջ են բոլորդ դրանք եւ աշխատում են նայել:

Կօշկարեօվ: Սուսս... Մէկը կալիս է: (Ամենը յիտ են փախզում):

### ՏԵՍԻԼ ԺԲ:

Նայեմ, Արինա Պանտելյանվնա եւ Ազաքեա Տիինովնա:

(Ամենը զուլս են իջեցնում):

Արինա Պանտելյանվնա: Ի՞նչ է պատճառը, որ մեզ այցելութիւն էք եկել:

<sup>(\*)</sup> Բնագրում. Гости-то не считаные, кафтаны обиццанные.

<sup>(\*\*)</sup> Բնագրում. Глаза налегть, на свой поясъ, а и похвастаться не чёмъ: шапка въ рукахъ, а лицъ безъ крыль.

Եաիչնիցա: Լբագրերից ես տեղեկացայ, որ դուք մտադիր եք փայտեղէնի և տախտակի աճուրդ վելցնել: Ենքս պետական պաշտօնատան էզքելուտօր լինելով, եկել եմ իմանալու, թէ ինչ տեսակ փայտեղէն, ինչ քառնակութեամբ և որքան ժամանակամիջոցում կարող էք հասցնել:

Արինա Պանտելյանվնա: Ասենք՝ ոչ մի աճուրդ մենք չենք վերցնում, բայց ուրախ ենք, որ շնորհ էք բերել խոկ ձեր ազգի անունն ինչ է:

Եաիչնիցա: Կոլիմսկի ասեսօր Իվան Պաւլովիչ Եաիչնիցա (Զուածեղիանց):

Արինա Պանտելյանվնա: Համեցէք ինդրեմ, նըստեցէք: (Դառնում է դէափ ժեւակինը եւ նայում նրան): Ներեցէք հարցնեմ...

Ժեւակին: Ես նոյնպէս լրագրներում ինչ որ մի բանի մասին յայտարարութիւն կարդացի, արի, ասացի՞ գնամ. եղանակն, ըստ երկութիւն, շատ լաւ էր ճանապարհներին ամեն տեղ խոտ:

Արինա Պանտելյանվնա: Իսկ ձեր ազգն ինչ պէս է:

Ժեւակին: Ծովային ծառայութեան պաշտօնաթող լիյտինանու Բաղդասար Բաղդասարովիչ Ժևակին 2-դ: Մենք ունէինք և մի ուրիշ Ժևակին. Նա ինձանից շուտ թաղեց պաշտօնը: Նա, մօրս ասեմ, վիրաւորուած էր ծնկան տակից: Գնդակն այնպէս զարմանալի կիրպով ծակել անցել էր, որ ծնկանը չէր դիպել. կարծես՝ միջից կաք անցկացրած լինէր, այնպէս որ, երբ մօտը կանգնում էիր, հենց կարծում էիր, թէ նա ուղղում է ետեկցդ ծնկնոլ խիել:

Արինա Պանտելյանվնա: Խոնարհաբար խնդրում եմ նստեցէք: (Դառնալով Անուշկինին), Ներեցէք՝ հարցնեմ. դժւք ինչ պատճառով էք շնորհ բերել:

Անուշկին: Ես էլ՝ ինչպէս դրացիր Զեզ շտո մօտ հարևան լինելով...

Արինա Պանտելյանովինա: Զեր հրամանքը մեր դիմացի հարևան Տուլուրով վաճառականի կնոջ տանը հօչք բնակւում:

Անուշկին: Ոչ, ես գեռ մինչև օրս բնակւում եմ Պետքի (Աւազի) ֆողոցում, բայց ժամանակով մտադիր եմ քաշուել քաղաքիս այս թաղը և ճեզ դրացի լինել:

Արինա Պանտելյանովինա: Խնդրեմ Խստեցէք (Դառնալով Կօչկարովին) Թոյլ տուէք հարցնեմ.

Կօչկարօվ: Եւ միթէ դուք ինձ չէք ճանաչում (Դառնալով Ագաֆեա Տիխոնովսային). դուք էլ նոյնպէս, տիրումի:

Ազաթեա Տիխոնովինա: Իմ կարծիքով ես երբէք ձեզ չեմ տեսած:

Կօչկարօվ: Բայց և այնպէս մտարերեցէք, հաւանական է, որ մի տեղ ինձ տեսած լինիք:

Ազաթեա Տիխոնովինա: Հաւատացնում եմ չըդիտեմ: Բիրիւշկինեց տանը հօչ չենք մեծուել:

Կօչկարօվ: Իսկ և իսկ Բիրիւշկինեց մօտ:

Ազաթեա Տիխոնովինա: Այսար դուք չըգիտէք, թէ Բիրիւշկինի կնոջն ինչ պատահեց:

Կօչկարօվ: Ինչպէս չէ, մարդի գնաց:

Ազաթեա Տիխոնովինա: Այդպէս հօ լաւ կըլինէր, ոտքը կոտրեց:

Արինա Պանտելյանովինա: Եւ իրատ սաստիկ է կոտրել: Բաւականին ուշ՝ կառքով տուն է դառնում եւ զել. կառապանը հարբած է լինում և կառքից վեր է զցում:

Կօչկարօվ: Ախար միտքս է, որ մի բան վատահեց, մարդի գնաց, թէ ոտքը կոտրեց:

Արինա Պանտելյանովինա: Իսկ ձեր ազգանունն ի՞նչպէս է:

Կօչկարօվ: Ինչ էք ասում: Իլիա Ֆօմիչ Կօչկարօվ: Զէ որ մենք աղքականներ ենք: Իմ կինս շարունակ այն է ասում, թէ... ըըլ... թոյլ տուէք (Բնում է Պողկակիսինի ծեռը եւ մօտ տանում): ահա, բարեկամս, Պողկակիսին իվան Կույզմիչ, նաղօրնի սովէտնիկ. Ինքը ծառայութեան մէջ է, էրսպեղիտօր է. ամէն գործ իր ծեռքովն է կատարում. ինչ որ իր մասն է՝ փառաւորապէս կատարելագործել է:

Արինա Պանտելյանովինա: Ազգն ի՞նչպէս է:

Կօչկարօվ: Պողկակիսին՝ իվան Կույզմիչ Պողկակիսին: Սրանց վիրեկորն իր աստիճանի պատճառով է այսուեղ նշանակուած, թէ չէ բոլոր գործերը սա ինքն է կատարում. սա՝ մեր իվան Կույզմիչ Պողկակիսինը:

Արինա Պանտելյանովինա: Հը մմ: Խնդրեմ, համեցէք, նոտեցէք:

Տեսիլ ժթ.

Նոյնի և Ստարիկով:

Ստարիկով: (Շտապով զլուկ է տալիս վաճառականի ծեռը ներքերը թոյլ կիրայով կորերին զրած): Բարեկ ձեզ, մէքս, Արինա Պանտելյանովինա: Գօստիննի գվօրի 1) տղէքն ասում էին, թէ դուք բուրդ էք ծախում, իմ մէքս:

Ազաթեա Տիխոնովինա: (Արհամարհանրով երևը շուռ է տալիս եւ զած ծացնով փնթփնթում է, բայց այնպէս, որ Ստարիկովը լսում է): Այսահեղ վաճառականի խանութ չէ:

Ստարիկով: Տեսամբ: Չըլինի անյարմար ժամանակ ենք եկել, կամ առանց մեզ ձեր բանը գլուխ էք բերել:

Արինա Պանտելյանովինա: Համեցէք, Ալեքսէյ Դի-

<sup>1)</sup> Վաճառանոց Վատկրոսքումբ:

միտրեվիչ, համեցէք. ասենք բուրդ չենք ծախում, բայց  
որ եկել ես, ուրախ ենք: Խողբեմ նստեցէք:  
(Քողոքեան նստում են: Լոռութիւն):

Եպիչնիցա: Ես օր տարօրինակ եղանակ է անում.  
առաւոտը բոլորովին անձրեի էր, իսկ հիմա, կարծես,  
ոչինչ, անցկացաւ:

Ազաթեա Տիխոնինա: Այս, էս եղանակն էլ, չը-  
գիտես՝ ի՞նչ է անում. մէկ տեսնում ես՝ պարզ է, մէկ  
էլ չփշփալով անձրեւ թափւում է: Մարդի սիրտ պատ-  
ռում է:

Ժեւակին: Սիկիլիայումն էլ նոյնն էր. մենք մեր  
նաւախմբով գարունն էինք այնտեղ—համեմատութիւն  
եթէ անհնք ինչպէս մեր վիետպարին: առանից դուքս  
ես զալիս՝ արեգակ է. յանկարծ՝ անձրեւ. մորիկ ես տա-  
լիս իսկ և իսկ, կարծեա թէ անձրեւ չպայխա: Եպիչնիցա:  
Տիխոնինա: Տիխուր բան է, երբ այդպիսի եղանա-  
կին տանը միայն նստած ես: Ամուսնացած մարդի բառ-  
նը բոլորովին ուրիշ է—նրա համար տիխուր չի անցկե-  
նում. իսկ միայնութեան մէջ... միանգամայն...

Ժեւակին: Օ՛հ, մահ է, կատարեալ մահ:

Անուշին: Այս, այս, կարեկի է ասել՝ ըըը՝..

Կոչկարեօվ: Էլ ի՞նչ—հոգի է զուրս զալիս, մարդ  
մեռնի լու է, քան թէ ասպրի. Աստուած իմ թշնամուն  
էզպէս փորձանքի չըհանդիպեցնի:

Եպիչնիցա: Ի՞նչպէս կանէիք, օրիորդ, եթէ դուք  
ձեզ համար կեանքի ընկեր ընտրելու լինէիք: Ներեցէք,  
կարելի է իմանալ ձեր ճաշակը: Ինձ կներեք, որ այս-  
պէս ուղղակի սկսում եմ: Ի՞նչպիսի պաշտօն կըցանկա-  
նայիք, որ ունենար ձեր ամուսինը:

Ժեւակին: Կըցանկանայիք, տիրուհի, որ ձեր ա-  
մուսինը ծովային փոթորիկների ծանօթ լինէր:

Կոչկարեօվ: Ո՛չ, ոչ. իմ կարծեօք, ամենից լաւ ա-

մուսինը նա է, որ ամբողջ դեպարտամենտը, հպատակեա,  
ինքն է կառավարում:

Եպիչնիցա: Նախապաշտումունքներն ընչի են պէտք.  
ընչի էք արհամարտում այն մարդին, որ թէպէտ ինքը  
հետևակ գնդի ծառայութեան մէջ է եղել, բայց և այն-  
պէս լաւ գիտէ զնանատել բարձր դասակարգի կենցաղը:  
Եպիչնիցա: Տիրուհի, դուք ինքներդ վճռեցէք:

Ազաթեա: Տիխոնինան (լուս է):

Ֆելլա: Պատամիան տուր, մէրս, մի բան ասա-  
ուրանց:

Եպիչնիցա: Հիմա ի՞նչ էք ասում, տիրուհի?

Կոչկարեօվ: Ուրեմն, ի՞նչ է ձեր կարծիքն, Ազա-  
թեա Տիխոնոնց վասար:

Ֆելլա: (Կամաց Ազաթեային): Դէք, ասա էլի, ասա՝  
«Ճնորհակալ եմ, շատ ուրախ եմ»... էղպէս լուս միա-  
լու լաւ չէ:

Ազաթեա Տիխոնինա: (Կամաց) Ես ամաջում եմ,  
հաւատացէք՝ ամաչում եմ. ես էստեղից կըդնամ: Հօրա-  
քոյր, արի, ինքդ իմ փոխանակ խօսիր:

Ֆելլա: Ա՛յ, էդ անպատճութիւնը մի անիւ մի  
գնալ, բոլորովին խաղք ու խայտառակրւած կըլինիս:  
Սատանան զիտէ, թէ սրանք ընչեր կը մտածեն:

Ազաթեա Տիխոնինա: (նոյնպէս կամաց) Ո՛չ, ուզիլ  
եմ ասում՝ ոչ, կերթամ, կերթամ, կերթամ. (Փախում  
հեռանում է: Ֆելլան եւ Արինա Պանտելէյոնովնան զնում են  
նրա նուելից):

Ֆելլա: Տեսիլ, ի.

Կոչկարեօվ: Կառավածեալ անուանական պատճեն (գործ)

Եպիչնիցա: Ա՛յ քեզ տրաքնց, բոլորը թողին, հե-  
ռացան. ի՞նչ կը նշանակէ այս

Կօչկարեօվի: Երեկի մի բան պատահեց:

Ժեւակին: Կանացի արդ ու զարդի մասին բան կը լինի պատահած, երեկի կը ծկալը պէտք է ուղղե... մի տեղ քորոց պէտք է խցկուի: (Ֆեկան ներս է դալիս: Բոլորի բան դիմաւորում եւ ճարցեր են տալիս):

Կօչկարեօվի: Ոչինչ հօ չը պատահեց: Ֆրանք բանակ Ֆեկան:

Ֆեկան: Ի՞նչ պիտի պատահէր: Աստուածա վկայ, ոչինչ չի պատահել:

Կօչկարեօվի: Հապա ընչի թռղեց, հեռացաւ:

Ֆեկան: Ամաշացրիք, նա էլ քաշուեց, գնաց, խեղճին ամօթի մէջ կորցրիք, ել չեկարողացաւ նստած մնալ: Խնդրում է, որ ներէք, իրիկունս, ասում է, համեցեք մի բաժակ թէյ անուշ անելու: (Դնում է):

Եափնիցա: (Առանձին) Օ՛հ, էլու մի բաժակ թէյլ հօ, էլ մի ասիլ. հէնց զրա համար չեմ սիրում հարսնախոսութիւնը. գլխացաւանք է, որ տալիս են, այսօր չի կարելի, վալը շնորհ բերէք, էկուց չէ միւս օրը խընդրենք մի բաժակ թէյի, դեռ մի բիշ հարկաւոր է մըտածել: Շատ վատ բան է, մարդի գլուխ է ուռչում, տրաքւում: Է՛հ, Աստուած անիծին, ես ծառայող մարդ եմ. ևս ժամանակ չունիմ, սարս տակին կրակ է վառում:

Կօչկարեօվի: (Պողկալեօսինին): Մեր խաթուն տիրուն աին տգեղ չէ: Զէ:

Պողկալեօսին: Այս, ոչինչ:

Ժեւակին: Տանտիրուհին լաւ է այս:

Կօչկարեօվի: (աշածին) Այ քեզ բան, այս յիմարը սիրահարուել է. վայ թէ մեր գործին արգելք դառնայր (քարձոր) Բոլորովին զեղեցիկ չէ, միանգամայն տգեղ է:

Եափնիցա: Քիթը մեծ է:

Ժեւակին: Այդպէս չէ... ես քիթը չընկատեցի.

Անուշին: Ես էլ նոյն կարծիքի եմ: Ո՛չ, այն չէ,

ինչ որ պէտք էր, այն չէ... ես, մինչև իսկ կարծում եմ, որ այդ աղջկը դժուար թէ բարձր դասակարգի կեանքու կենցաղից հասկացողութիւն ունենայ: Դեռ ինդիր է՝ ֆրանսերէն գիտէ արդեօք: Ի՞նչ մի մեր մասին գիտէ արդեօք:

Ժեւակին: Համարձակութիւնս ներեցէք, ընչի չը փորձեցիք, ընչի հետը ֆրանսերէն չըխօսեցիք, Գուցէ և գիտէ:

Անուշին: Դուք հէնց կարծում էք, թէ ես ֆրանսերէն խօսում եմ: Ո՛չ. ես այդ կրթութեան արժանանալու բաղդը չեմ ունեցել. իմ հայրս անպիտան անասունի մէկն էր: Նա մտքովն անգամ չէր անցկացրել ինձ ֆրանսերէն սովորցնելու: Ես այն ժամանակ մի մատն երեխայ էի, շատ հեշտ էր ինձ սովորցնելը: Հերիք էր, որ մի լաւ ծեծ տային և ես կը ակտենայի ֆրանսերէն, անպատճան կը գիտենայի:

Ժեւակին: Իսկ մինչդեռ դուք ինքներու չըգիտեք ինչ օգուտ ունիք, եթէ այս աղջկը լլ:

Անուշին: Զէ, այդպէս չէ: Կինը բոլորովին ուշը բան է, հարկաւոր է, որ կինն անպատճան գիտենայ, ապա թէ ոչ, առանց զրան կնոջը և՛ այս, և՛ այն... (ցոյց է տալիս ծերոքի շարժուածքներով) մի խօսքով չի լինի այն, ինչ որ պէտք էր:

Եափնիցա: (Առանձին): Այդ մասին թող ուրիշները հոգան. իսկ ես կերթամ բակիցը տունն ու ֆլիգելը կըսնտղեմ. եթէ ամէն ինչ տեղին ու կարգին կայ, հէնց այս երեկոյ ես գործը գլուխ կըրերեմ: Այս վեսացուներն ինձ համար շատ վտանգաւոր չեն գատարկ մարդ դիկ ես երեսում: Հարսնացուներն այսպիսիներին չեն սիրում:

Ժեւակին: Գնանք, չիրուխ քաշենք: Մեր ձանապարհը մէկ չէ, նեղութիւն չըլինի հարցնելը, հրամանքը որտեղ էք բնակւում:

Անուշին: Ես բնակեռում եմ, Պեսկումը և Պետրովսկի  
խաչփողոցում: Եղայ չի դատիք զի՞րա բա ո՞ո և և  
ժեւակին: Այս, մեծ պայոյտ կլինից ես բնակեռում  
եմ Կղզու 18-րդ գծի վրայ, բայց և այնպէս, ես ձեզ ճա-  
նապարհ կը դնեմ: Ամենի վրա ամենի վրա:

Ստարիկով: Զէ. Ես տանեցիք, կարծես, էսօք քթերը  
ցցած են երկում: Լաւ, Ազաֆեա Տիխոնովյան, դու մէկ  
օր մեզ միտք կը ըերես: Մնաք բարին, պարոններ:

(Գլուխ է տալիս եւ հեռանուց): Ահ ահ անսօն մը յս  
աւան մասունքու ուրած են ահ յըրադ այսամ  
յացցացիւն զի՞ նարա գործ ամ ոյս սի՞ վայս մի՞ բան

### ՏԵՍԻԼ ի. Ա.

Պօդկալեօսին: Խենք ընչի ենք սպասում:  
Կօչկարեօվ: Հը էնպէս չէ, որ մեր խանում տան  
տիրուհին շատ գուրեկան է:

Պօդկալեօսին: Խոսականք պահես՝ դա ինձ չի դուր  
գալիս:

Կօչկարեօվ: Դէս, համեցէք: Դու չէիր, որ համա-  
ձայնեցիր, թէ, այս, գեղեցիկ է:

Պօդկալեօսին: Հէսց էնպէս, էն չէ, կարծես, ինչ որ  
պէտք էր. համ քիթն է մեծ և համ ֆրանսերէն չի ի-  
մանում:

Կօչկարեօվ: Այդ ինչ նոր բան էր. Փրանսերէնը  
քո ընչին է պէտք:

Պօդկալեօսին: Այնու ամենայնիւ հարսնացուն պէտք  
է ֆրանսերէն իմանայ:

Կօչկարեօվ: Ախր ընչին համար:

Պօդկալեօսին: Նրա համար որ... ինքս էլ չգիտեմ  
ընչին համար, բայց որ այն չի լինիլ ինչ որ պէտք էր:

Կօչկարեօվ: Առ քեզ ինչ թէ յիմարի մէկը նոր  
այդ բանն ասաց, սա էլ ձեռաց ականջները լայն բաց

արեց: Այդ աղջիկը գեղեցկուհի է, կատարեալ գեղեց-  
կուհի, այդպիսի օրիորդ ոչ մի տեղ չես գտնիլ:

Պօդկալեօսին: Սկզբումը նա, համարեա, ինձ էլ էր  
դուր գալիս, բայց վերջը՝ երբ ամէն կողմից սկսեցին  
կրկնել. — քիթը երկար է, երկարաքիթ է, ես էլ լաւ  
տնտղեցի և աչքովս տեսայ, որ երկարաքիթ էր:

Կօչկարեօվ: Աչքերդ բաց է, աչքիդ առաջը չես տես-  
նում: 1) Նրանք դիմամբ էին այդպէս խօսում, որ քեզ  
յետ խիեն, հեռացնեն, ինքս նմանապէս չէի գովում:

կարգն այդպէս է. այդպէս պիտի անել: Գիտեմ, սիրե-  
լիս, նա ինչ աղջիկ է. մի աչքերին նայիր, աչքերին,  
աչքեր եմ ասում է, կարծես խօսում են, շնչում են: Հա-  
պա քիթը, ինչ հիմանալի քիթ: Հապա սպիտակութիւ-  
նը, կատարեալ մարմառ է: Եւ կամ ինչ մարմառ կը հա-  
մեմատուի նրա հետ: Ինքդ քո աչքովը մի լաւ գիտիր:

Պօդկալեօսին: (Ժպտալով): Ես հիմա նորից նկա-  
տում եմ, որ նա, կարծես թէ, գեղեցիկ է:

Կօչկարեօվ: Ի հարկէ գեղեցիկ է: Լսիր՝ ի՞նչ եմ  
ասում, հիմա՝ որ ամենքը թողին, հեռացան, արի մենք  
մտնենք աղջկայ մօտ, բաց աշկարա պարզուենք և մի  
անգամից վերջացնենք:

Պօդկալեօսին: Ոչ, այդ ես չեմ անիլ:

Կօչկարեօվ: Ի՞նչո՞ւ:

Պօդկալեօսին: Ի՞նչ ազնւութիւն է, փեսացուներս  
շատուր ենք, թող աղջիկն ինքն ընտրի:

Կօչկարեօվ: Ի՞նչի դու պիտի նրանց նայես. մըր-  
ցումից ես վախում: Կուզես. մի բողէի մէջ բոլորին  
ճանապարհ ցոյց տամ:

Պօդկալեօսին: Ի՞նչպէս ցոյց կը տա:

Կօչկարեօվ: Այդ արդէն իմ կործն է: Միայն թէ դու  
ինձ կանխապէս խօսք տուր, որ յետոց չընթաժարուիս:

1) Բնագրում ոռոսական առածեն է. Թէ ты, սирей, ու աշաւ ձեր ը-

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ**  
Սենեակ՝ Ազագեա Տիխոնովսյի տանը:

**ՏԵՍԻԼ Ա.**

Ազագեա Տիխոնովնա միացն, յեռյ Կօչկարհօվ.  
Ազագեա Տիխոնովնա; Իրաւ, ընտրութիւն անելը շատ դժուար բան է եղած. գոնէ մէկը, կամ երկու սը լինէին, յանկարձ՝ չորսը միասին, համեցէք՝ ընտրիր. Նիկանօր Իվանովիչը, ասենք՝ քիչ լղարմղար է, բայց գէշ մարդ չի. Իվան Կույզմիչը նոյնպէս վատ չի. Ուղիղը որ խօսենք՝ Իվան Պաւլովիչը նոյնպէս ոչինչ. Ինքը թէպէտ խիստ հաստ ու գէր է, բայց շէնք ու շնորհքով տղամարդ է: Համեցէք հապահ, հիմիկ լինչպէս անենք: Բաղդասար Բաղդասարովիչը նմանապէս արժանաւոր տղամարդ է: Զը գիտեմ՝ ինչ վճռեմ. Էնքան դժուար է, որ ասել չի լինիւ Եթէ հնար լինէր՝ Նիկանօր Իվանովիչի պոջները կտրէինք, դնէինք Իվան Կույզմիչի քթի մօտ, հետո էլ փոքր ինչ միացնէինք Բաղդասար Բաղդասարովիչի ճարպիկութիւնը և վրան աւելացնէինք Իվան Պաւլովիչի հաստութիւնն ու գերութիւնը, ես խսկոյն կը վճռէի: Հիմի զնա ու խելքիդ գոյ տուրք. քիչ է մնում՝ վլուխս ցաւից տրաքիւմ կարծեօք, ամենից լաւն է վիճակ բանալը. Աստուծու կամքին թողնեմ, վիճակը հանեմ, ով դուրս գայ,

Նա թող իմ մարդս լինի: Ամենքի անունները թղթի կտորների վրայ կըզբոտեմ, կողորեմ ու ինչ կը լինի, թող լինի: (Սօտենում է սեղանին, հանում է միջից միքատ ու եռլթը, տոմսակներ է կտրում է եւ շարունակելով խօսելը, ոլորում է): Ահա, էսպէս է օրիորդի թշուառ գրութիւնը, էն էլ՝ սիրահարուած օրիորդի: Աչ մի աղամարդ չե մտնում մեր զրութեան մէջ, մինչև անդամ հասկանալ չեն ցանկանում: Այ, տոմսակները բոլորը պատրաստ են, մնում է միայն, որ գնեմ պայտուսեակի մէջ, աչքերս փակեմ և ինչ գալու է՝ թող գայ: (Տօնսակները զնում է պայտուսեակի մէջ եւ ծեռով խառնում): Սարսափում եմ... եթէ Աստուած տար, Նիկանօր իվանովիչը գորս զար... Ոչ ընչի Նիկանօր իվանովիչը: Աւելի լաւ է՝ իվան Կույզմիչը... Ալսար, ընչի իվան Կույզմիչը, ուրիշներն ընչով են վատ: Ոչ չէ, չեմ ուզում, արը դուրս կըզայ, թող նա լինի (Չեռը կոխում է պայտուսեակի մէջ, խառնըշում եւ հանում բոլորը միանգամկից): Ա՛խ, բոլորը գուրս եկան... Սիրտս արովաբուժում է: Ո՞չ ոչ մէկը, մէկը, անդաստճառ միայն մէկը: (Տօնսակները զնում է պայտուսեակի մէջ եւ խառնում): Այդ ժամանակը կամաց կամաց ներս է մտնում կօջարեսօն եւ ետեւը կանգնում): Ա՛խ, երանի Բաղդասարին հանէի... ի՞նչ եմ ասում... ուզում էի ասել՝ Նիկանօր իվանովիչն... Ո՞չ չեմ ուզում, չեմ ուզում. ինչ որ ճակատիս զբուած է, թող էն լինի:

Կօչկարեօվ: Դէ, առէք իվան Կույզմիչը վերջ տուէքը: Նա ամենքին է:

Ագաֆեա Տիխոնովինա: Ա՛խ է ամպիտանի մէկն է:

Կօչկարեօվ: Թողէք, Աստուած սիրէք, իվան Կույզմիչի հետ համեմատած՝ նա անպիտանի մէկն է:

Ագաֆեա Տիխոնովինա: Ընչով համար:

Կօչկարեօվ: Շատ պարզ: Իվան Կույզմիչը մարդ է... մարդ է, որի հատը չես ճարիլ:

Ագաֆեա Տիխոնովինա: Հապա իվան Պաւլովիչը:

Կօչկարեօվ: Իրան Պաւլովիչն էլ է անպիտան, նրանք բոլորն էլ անպիտան են:

Ագաֆեա Տիխոնովինա: Միթէ հէսց բոլորն էլ:

Կօչկարեօվ: Դուք ինքներդ համեմատութիւն աւէք, սա գոնէ Կույզմիչ է. մատցածները ի՞նչ են. իվան Պաւլովիչ, Նիկանօր իվանովիչ. ի՞նչ ուներս են Պրանը:

Ագաֆեա Տիխոնովինա: Ախար նրանք, ուզիկն եմ ասում, շատ... համեստ մարդիկ են:

Կօչկարեօվ: Ի՞նչ համեստ: Կոռւարար, ամենահանգիստ մարդիկ են: Զեզ համար ի՞նչ ուրախութիւն, որ պսակի երկրորդ օրը ծեծ ուտէիր:

Կօչկարեօվ: Ոչինչ, ոչինչ. ես օտար չեմ, ես տառ մարդ եմ, ազգական եմ, ինձանից ընչի՞ պիտի ամաչէք, բաց արէք ձեր երեսը:

Ագաֆեա Տիխոնովինա: (Երեսը կիսատ բանալով): Ուզիկ եմ ասում, ամաչում եմ, ամօթ է ինձ:

Կօչկարեօվ: Առէք, ուրեմն, իվան Կույզմիչն: Ագաֆեա Տիխոնովինա: Ա՛խ: (Ճում է եւ նորից աչքերը ձեռքերով փակում):

Կօչկարեօվ: Ճշմարիտ, հիանալի մարդ է, իր պաշտօնին վերաբերեալ մասը միանգամայն կատարելաւ գործել է, մի խօսքով զարմանալի մարդ է:

Ագաֆեա Տիխոնովինա: (Կամաց-կամաց երեսը բանում է): Իսկ մէկէլը, իսկ Նիկանօր իվանովիչը. Նա էլ հօր լաւ մարդ է:

Կօչկարեօվ: Թողէք, Աստուած սիրէք, իվան Կույզմիչի հետ համեմատած՝ նա անպիտանի մէկն է:

Ագաֆեա Տիխոնովինա: Ընչով համար:

Կօչկարեօվ: Շատ պարզ: Իվան Կույզմիչը մարդ է... մարդ է, որի հատը չես ճարիլ:

Ագաֆեա Տիխոնովինա: Հապա իվան Պաւլովիչը:

Կօչկարեօվ: Իրան Պաւլովիչն էլ է անպիտան,

նրանք բոլորն էլ անպիտան են:

Ագաֆեա Տիխոնովինա: Միթէ հէսց բոլորն էլ:

Կօչկարեօվ: Դուք ինքներդ համեմատութիւն աւէք, սա գոնէ Կույզմիչ է. մատցածները ի՞նչ են. իվան Պաւլովիչ, Նիկանօր իվանովիչ. ի՞նչ ուներս են Պրանը:

Ագաֆեա Տիխոնովինա: Ախար նրանք, ուզիկն եմ ասում, շատ... համեստ մարդիկ են:

Կօչկարեօվ: Ի՞նչ համեստ: Կոռւարար, ամենահանգիստ մարդիկ են: Զեզ համար ի՞նչ ուրախութիւն, որ պսակի երկրորդ օրը ծեծ ուտէիր:

Ազաթեա Տիխոնովնա: Վայ գլուխ, դրանից մեծ  
անբաղութիւն չի կարող լինի:

Կօշկարեօվ: Անտարակնյա, դրանից վատթար բան  
մարդիս մտքովը չի կարող անց կենալ:

Ազաթեա Տիխոնովնա: Ուրեմն ձեր խորհրդով ա-  
ւելի լու է իվան կուզմիչին առնել:

Կօշկարեօվ: Իվան Կուզմիչին, անշնուշտ Իվան Կուզ-  
միչին (առանձին): Կարծեմ, գործը յաջող է գնում:  
Պօղկալեօսինը շաքարեղին ծախողի խանութում նստած  
է, զնամ շուտով կանչեմ:

Ազաթեա Տիխոնովնա: Ուրեմն ձեր կարծիքով ի-  
վան կուզմիչին:

Կօշկարեօվ: Անպատճառ իվան կուզմիչին:

Ազաթեա Տիխոնովնա: Իսկ մէկէներին միթէ  
պիտի մերժել:

Կօշկարեօվ: Ի հարկէ միրժել:

Ազաթեա Տիխոնովնա: Ախար ինչպէս անեմ. մի  
քիչ ամօթ բան է:

Կօշկարեօվ: Ինչո՞ւ է ամօթ: Ասացէք՝ դեռ ջանէլ  
էք և չէք կամենում ամուսնանալ:

Ազաթեա Տիխոնովնա: Ախար նրանք չեն հաւա-  
տալ, կմկնեն հարց ու փորձի կապել՝ ընչու, ինչպէս:

Կօշկարեօվ: Ուրեմն եթէ կամենում էք մի անդա-  
մից վերջ տալ, ուղղակի ասացէք՝ «Պուրս կորէք, յի-  
մարներ»:

Ազաթ. Տիխոնովնա: Էղպէս ինչպէս է կարելի ասել:  
Կօշկարեօվ: Փորձեցէք. հաւատացնում եմ, որ դը-

րանից յետոյ՝ ամէնքը դուրս կը փախչին:

Ազաթեա Տիխոնովնա: Ախար էդ մի տեսակ հայ-  
նոյանք է դուրս գալիս:

Կօշկարեօվ: Ախար դուք այնուհետեւ նրանց չէք  
տեսնելու, ուրեմն ողջ մէկ չէ:

Ազաթեա Տիխոնովնա: Ախար մի տեսակ, կարծես,  
ուր բան չէ. մարդիկը կը վիրաւորուեն:

Կօշկարեօվ: Վնասն բնչ, եթէ վիրաւորուեն: Եթէ  
դրանից մի բան դուրս գալ, ուրիշ բան էր: Շատ, շատ  
նրանցից մէկն ու մէկը երեսիդ կը թքի, և վիրջացաւ:

Ազաթեա Տիխոնովնա: Այ, տեսնում էք:

Կօշկարեօվ: Ի՞նչ վնաս. Աստուծոյ անունովն եմ  
Երգւում. ուրիշների երեսին մի քանի անգամ են թքել:  
Ես մէկին ձանաչում եմ, ինքը գեղեցիկ տղամարդ,  
թշրը կաս-կարմիր: Նա այնքան ձանձրացրեց և զզուա-  
ցրեց իւր մեծաւորին ոռճիկ աւելացնելու համար,  
որ վիրջնս, հաւատացէք Աստուած, չըկարողացաւ  
համբերել—կում արեց և ուղղակի երեսին թքեց:  
«ԱՌ քեզ ոռճիկ աւելացնել ասաց, սատանայ,  
աւելոք քաշիր կորի: Բայց ոռճիկը դարձեալ աւե-  
ճեռք քաշիր կորի: Ուրեմն ի՞նչ վնաս, որ թքեց: Ուրիշ էր,  
լացրեց: Ուրեմն ի՞նչ վնաս, որ թքեց: Ուրիշ էր,  
թաշկինակը մօտ չըլինէր. թաշկինակը գրալա-  
թէ թաշկինակը էր, հանեց ու սրեց: (Հայոց զանգա-  
նում պատրաստ էր, հանեց ու սրեց: Դայուց զանգա-  
նում պատրաստ էր, հանեց ու սրեց: Նրանցից մէկն ու մէկը  
կըլինի. ես չէի ցանկանալ այժմ նրանց համդիպել:  
Ուրիշ ձանապարհ չըկայ գնալ հեռանալու:

Ազաթեա Տիխոնովնա: Ինչպէս չէ, ետեւ կողմի  
ասնդիքովը ձանապարհ կայ: Բայց ուղիղ եմ ասում.  
գող ու սարսափու բռնել է:

Կօշկարեօվ: Ոչինչ, դուք միրայն սիրտդ ամուր  
պահեցէք: Մնացէք բարեւ: (Առանձին): Երթամ շուտա-  
փոյթ Պօղկալեօսինը բերեմ:

ՏԵՍԻԼ Բ.

Ազաթեա Տիխոնովնա և Խափէնքա.

Եախնիցա: Ես, տիրուհի, փոքր ինչ վաղ եկայ,

որ ազատ միջոց ունենամ ձեզ հետ առանձին խօսելու: Եւ այսպէս, օրինրդ, կարծում եմ, այժմ դուք իմ աստիճանս գիտէք: Կողեմսի ասեսօր եմ, ծառայութեան մէջ եմ, մեծաւորներս ինձ սիրում են, ստորագրեալներս լսում են... ինձ պակաս է միայն մի բան՝ կեանքի ընկեր:

Ազաթեա Տիխոնովնա: Հըլըմմ:

Եսիշնիցա: Ես այժմ գտել եմ իմ կեանքի ընկերը: Այդ ընկերը դուք էք: Ասացէք ճակատ առ ճակատ. այ՞ո, թէ ոչ: (Աղջկայ ուսի փրայով նայում է նեռուն): Օօօ, սա այն չէ, ինչ որ չոր ու ցամաք գերմանուհիքըն են լինում. սրա մէջ ինչ որ բան կայ:

Ազաթեա Տիխոնովնա: Ես գեռ շատ ջաճէլ եմ... ըըլը..., դեռ արամագիր չեմ ամուսնանալու:

Եսիշնիցա: Թողէք, խնդրեմ. հապա միջի մարդն ընչու է գլուխ ցաւացնում: Բայց կարելի է դուք ուրիշ բան էք կամենում ասել՝ պարզ յայտնեցէք... (լսում է զանգակի ձայն) Անիծուիս դու չար սատանայ, չեն թողնում մարդ գործի կենայ:

Տիխոնի դ.

Նոյնի եւ Ժեւակին:

Ժեւակին: Ներողութիւն, տիրուհի, գուցէ փոքր ինչ վաղ եմ եկել: (Յետ է շրջում եւ տեսնում Եսիշնիցան): Ա՛խ, արդէն այստեղ կան... Իվան Պալովիչին բարի:

Եսիշնիցա: (Առանձին): Գետինը խորտակուիս դու քո բարեկզ: (Արձիք) Հիմա ինչ էք ասում, տիրուհի: Մի խօսք միայն ասացէք՝ այս, կամ ոչ... (Զանգակի ձայն: Եսիշնիցան բարկութիւնից թրում է): Դարձեամ զանգակ:

Տիխոնի դ.

Նոյնի եւ Անուշին:

Անուշին: Գուցէ ես, տիրուհի, աւելի վաղ, եմ եկել, քան ինչ որ քաղաքավարութիւնն է պահանջում... (Տիխոնի մասներին, զարմացական բացականութիւն է անում և ողջոյն է տալիս): Բարեկ' ձեզ:

Եսիշնիցա: (առանձին): Գլխավոր գիպչի բարեկ: Ո՞ր սատանան քեզ տուն ձգեց, կոտրատուէին այդ չոր-չոփ ոտներդ: (բարձր) Ուրեմն ինչ կասէք, տիրուհի, վճռեցէք—ես պաշտօնի տէր մարդ եմ, ժամանակս քիչ է— այ՞ո, թէ ոչ:

Ազաթեա Տիխոնովնա: (Շփոթուած). Հարկաւոր չէ... հարկաւոր չէ... (առանձին): Ասածս չեմ հասկանում: Եսիշնիցա: Ի՞նչ չպէս թէ հարկաւոր չէ: Ի՞նչ դիմաց չի հարկաւոր:

Ազաթեա Տիխոնովնա: Բըլը... ոչի՞նչ... Ես այդ չէի... ըլը... (սրտավնդուած). Կորէք, գնացէք... (Կողմը՝ քիշի իր սրբիկով): Տէր իմ Աստուած, էս ինչ ասցի:

Եսիշնիցա: Ի՞նչ պէս թէ՝ «կորէք գնացէք»: Այդ բնչ է նշանակում՝ «կորէք գնացէք»: Թոյլ տուէք հարցնել. դրանով ինչ էք ուզում հասկացնել: (Զերքիրը կողքին դրած ապաւնաբնին մօտենում է աղջկանը):

Ազաթեա Տիխոն ովենա: (Նայելով նրա երեսին, միշ է արձակում): Ա՛խ, կըծեծի ինձ, կըծեծի: (Փախում է: Եսիշնիցան մնում է բերանը բաց կանգնաւ: Ճողի վրա ներս է իշնիցան մնում է բերանը բաց կանգնաւ: Եւ նայելով Եսիշնիցաի դժմբնին մասնապէս ճշում է:.) «Ա՛խ, կըծեծի:» (Դուրս է փախում:)

Եսիշնիցա: Առակս զի՞նչ ցուցանէ: Այ, լաւ օյ ին (Դուրս բախում են: Լսում են ձայներ):

Կօշկարեօվի ձայնը: Մտիր, ներս մտիր, ի՞նչ եռ  
կանգնել, մնացել:

Պոդկալեսինի ձայնը: Դու առաջ ընկիր: Եռ մի  
բռպէ միայն, միջկապիս փոկը բացուել է, ուղղեմ ու  
գամ:

Կօշկարեօվի ձայնը: Դու նորից կըծկուես:

Պոդկալեսինի ձայնը: Չեմ ծլկուիլ, Աստուած վը-  
կայ, չեմ ծլկուիլ:

ՏԵՍԻԼ Ե.

Կոչկարեօվ:

Կօշկարեօվ: Մեծ բան, թէ միջկապդ չէիր ուղղիր:  
Եափնիցա: (գառնալով Կօշկարեօվին): Խնդրեմ ասէք  
այս հարսնացուն յիմար է, ի՞նչ է:

Կօշկարեօվ: Ի՞նչ կայ, բան հօ չի՞ պատահել:

Եափնիցա: Անհասկանալի վարմունք: Թողեց գուրու  
փախաւ ու սկսեց ճչալ ու ծղբառալ: «կըծեծի, կըծե-  
ծի»: Մարդ չի հասկանում» ի՞նչ է:

Կօշկարեօվ: Այո, նրանում այդ կայ, յիմար է:

Եափնիցա: Համ... Ախար դուք նրա ազգականն  
էք: Հասկանալի՞ է:

Կօշկարեօվ: Ի՞նչպէս չէ, ազգականն եմ:

Եափնիցա: Կարելի՞ է իմանալ՝ ի՞նչ ազգականու-  
թիւն ունիք:

Կօշկարեօվ: Ուղիղ ասած՝ չը գիտեմ, իմ մօր մօրա-  
քոյրը պիտի լինի այդ աղջկայ հօր, չը գիտեմ, ի՞նչը,  
թէ դրա հայրն է իմ մօրաքրոջ ի՞նչ որ ազգականը Այդ  
բանն իմ կնոջն է յայտնի—այդ կանանց գործ է:

Եափնիցա: Խսկ վաղուց է՝ դա դիպած է, վերնա-  
տունը դատարկ է:

Կօշկարեօվ: Դեռ ևս մանկութիւնից:

Եափնիցա: Առաւելի լաւ կըլինէր, ի՞արկէ, եթէ  
աղջիկը խելացի լինէր, բայց և այնպէս յիմարութիւնը  
նմանապէս վնաս չունէր, եթէ յիմարութիւն լրացու-  
ցիչ հանգամանքները, ինչպէս վայել է, տեղին ու կար-  
գին լինէին:

Կօշկարեօվ: Ախար, այդ աղջիկը ոչինչ բաժինք չունի:  
Եափնիցա: Ի՞նչպէս, հապա քարէ տունը:

Կօշկարեօվ: Այդ միայն խօսք է, թէ քարէ տուն  
կայ. իսկ եթէ դուք իմանայիք, ի՞նչպէս է շինած. պա-  
տերը մի տակ աղիւսից են. իսկ մէջ տեղն ի՞նչ կեզտո-  
տութիւն ասեան լցրած է. խիճ, տաշեղներ, փայտի  
տաշուածքներ:

Եափնիցա: Մի՞թէ:

Կօշկարեօվ: Ի հարկէ: Որպէս թէ, ձեզ յայտնի չէ,  
ներկայումս աներն ի՞նչպէս են շինում: Այնքան մի-  
այն, որ լօմբարդումը գրաւ գրուեն:

Եափնիցա: Իսկ այս աղջկայ տունը հօ՛ չէ՞ դրած:

Կօշկարեօվ: Չեզ ով ասաց: Բանն այս է, որ ոչ  
միայն գրաւ է դրուած, այլ երկու տարի է՝ տոկոսը  
չի ներկայացրած: Սենատումը մի եղբայր ևս ունի. նա  
նոյնպէս այդ տան վրայ աշք է տնկած, խարդախի  
մէկն է, որ Աստուած նմանը չի ստեղծել, իր ծնող մօր  
մէկն է, որ Աստուած նմանը պատրաստելու մասն է, որ ան-  
վերջին շապիկը հագիցը կը հանէ անխճճմտանք ան-  
հոգին:

Եափնիցա: Հապա ի՞նչպէս ինսամխօս պառաւն ինձ...

Ա՛յ նրա քաւթառ... դրանք մարդկութեան թքանքն...

(Առանձին): Սակայն շատ կարելի է՝ սա ինքն է սուտ  
խօսում: Պէտք է պառաւին սաստիկ հարց ու փորձի

խօսում: Եթէ սրա խօսքերն ուղիղ են... այն Ժա-  
մանակը... ես պառաւին այնպէս կը ճգնեմ, որ ասածին  
ու խօսածին էլ կը զդիալ:

Անուշին: Ներեցէք, ես էլ մի նեղութիւն պատ-

ճառեմ ձեզ, մի հարցմունք էլ ես անեմ. խոստովանած՝ ինքս ֆրանսերէն չեմ հասկանում և ինձ համար շատ գժուար է վճռելը. արդեօք այդ կիսը զիտէ՞ ֆրանսերէն, թէ ոչ: Նա, ինչպէս տանտիրուհի, իմանում է արդեօք...

Կօչկարեօվ: Եւ նչ մի խօսք:

Անուշկին: Ի՞նչ էք հրամայում:

Կօչկարեօվ: Անտարակնյս, այդ բանն ինձ քաջ յայտնի է: Սա իմ կնոջ հետ միասին ուսանում էր պանսիօնումը. ծոյլերի թագաւորն էր. յիմարի (պատժական) գտակը շարունակ գլխից անպակաս էր. իսկ ֆրանսերէնի ուսուցիչը միշտ ծեծում էր որպան ձեռնափայտով:

Անուշկին: Կարող էք երեակայի՛ առաջին իսկ տեսնելուն՝ մի նախազգացմունք մէջս զարթնեց՝ թէ սա ֆրանսերէն չը պիտի իմանայ:

Եաիշնիցա: Էս, շատ հարկաւոր էր զրա ֆրանսերէնը: Բայց էն անիծած ինամիսոս քսւթառը... այ գու ջադուքար կախարդ: Եթէ իմանայիք՝ ինչ խօսքերով էր մէկ մէկ նկարազբում: Նկարիչն կատարեալ նկարիչ: «Մի տուն, մի ֆլիքն, ասում էր, հիմքը քարից, արծաթէ զրգաներ, սահնակ-նստիք ու գլուխը բաց թող»: մի խօսքով՝ վէպիրի մէջ այդպիսի նկարագրութիւններ հազուագիւտ են: Այ գու փթած տրեխ, թէ ձեռքս կը ինկամս...

### ՏԵՍԻԼ Զ.

(Ումենք տեսնելով պատախն՝ դառնում են նրան հետեւեալ խօսքերով),

Եաիշնիցա: Այ նա, հապա մօտ արի, քաւթառ խարեւայ, մօտ արի:

Անուշկին: Այդպէս, ուրեմն, ինձ խարեցիր էլի, ֆեկլա իվանովնա:

Կօչկարեօվ: Հապա, խաթուն-խանում, մէջ արի, գլուխդ արդարացրու: <sup>1)</sup>

Ֆեկլա: Բան չեմ հասկանում, ականջներ խլացրիք:

Եաիշնիցա: Փթած կաշի, էս տունը մի տակ աղիւսից է եղած և զու ընչեր էիր փշում. վերնատննունի, սատանին է յայտնի, թէ ի՞նչ ունի...

Ֆեկլա: Ես ի՞նչ զիտէմ. Ես հօ չեմ շինել, Երկի, հարկաւոր է եղել մէտակ աղիւսից շինելու, էնպէս էլ շինել են:

Եաիշնիցա: Դեռ լօմբարդում էլ զրաւ է զրուած: Հոգիդ սատանան տանի, կախարդ անիծած: (Ուրը զետնին զարկելու):

Ֆեկլա: Մրան տեսէք: Դեռ հայնոյում էլ է: Ուշրիշը քաշած չարչարանքներիս համար հազար շնորհակալութիւն կանէր:

Անուշկին: Այն, ֆեկլա իվանովնա, գուք իմ գուտին էլ տանում էիք, թէ աղջիկը ֆրանսերէն զիտէ:

Ֆեկլա: Գիտի, աչքի լիս, ամեն ինչ զիտի, թէ լեմսի, թէ ամէն մէկի նիստ ու կացը, ողջ զիտի:

Անուշկին: Ո՛չ, չէ. կարծեմ նա միայն ոռուսերէն է խօսում:

Ֆեկլա: Վատ է անում: Ոռուսերէնն ամենից հեշտ հասկանալուն է, զրա համար նա էլ ոռուսերէն է խօսում: Թէ անհաւատ թուրքի լեզուն իմանար, քեզ համար աւելի վատ կը լինէր. նրա խօսածներից՝ ոչ մի բան գլուխդ չէր մտնիր: Զուր տեղն էստեղ ոռուսի լեզուի վրայ, թող, ոչ ով բերան չը բաց անի. ոռուսի լե-

1) Բնագրում սատական տաճն է. Կո-կա շուայ, Վարվարա, ու բարձրացրան:

գուն յայտնի է, սբրերը բոլորն ռոսերէն են խօսում:  
Եալինիցաւ: Մի մօտ արի, անիծած, մի ինձ մօտ  
արի:

Ֆելլա: (յետ ու յետ զնողով դէպի դուռը): Իսկի էլ չեմ  
գալ, ես քեզ ճանաչում եմ, ծանր ձեռք ունիս, զուր  
տեղը մարդ կծեծես:

Եսիշնիցաւ: Մտիկ տներ, բարեկամ, այդ քեզ ար-  
ժան չի նստիլ: Երբ որ քեզ քարշ կը տամ ոստիկա-  
նատուն, զու այն ժամանակը կը հասկանաս, թէ աղ-  
նիւ մարդկանց խարեն ինչ կը նշանակէ: Ա՛յ, կլտես-  
նիս: Այդ քո հարսնացուին էլ ասա, որ ինքն անաղ-  
նիւ անպիտանի մէկն է: Անպատճառ ասես, այ: (գնում է):

Ֆելլա: Տեսնում ես ոնցն է. ինչպէս էլ բարկա-  
նում էր. ինքը որ հաստացել, գերան է գառել, կար-  
ծում է, թէ էլ իր պէս ուրիշը չը կայ: Իսկ ես ասում  
եմ, որ անպիտանը դու ինքդ ես:—Ա՛յ քեզ:

Անուշիին: Խոսովանում եմ, սիրելիս, ես երեւք  
չէի կարծիլ, որ դուք այդպէս խարերայ լինէիր: Եթէ  
իմանայի, որ հարսնացուի հասկացողութիւնն և ուսումն  
այդքան է, ես... իմ ոտքս էլ բնաւ այստեղ չէր լինէր  
Ա՛յ, ինչ: (գնում է):

Ֆելլա: Մարաք զիժ հաց էին կերել, թէ մի քանի  
թաս աւելի էին կոնձել: Մրանք էլ աղջիկ ջոկողներ են  
դուրս եկել: Էն անտէր այբ ու բենն է դրանց խելքը  
թողը:

Տեսիլ է.

Ֆելլա, Կօչկարեօվ, Ժեւակին:

Կօչկարեօվ: (Մատը դէպի ֆելլան ցցած, նայում է նրան  
ու կը կըում, հոնուում):

Ֆելլա: Դու ինչ ես բողազդ ճոթում:

Կօչկարեօվ: (Նարունակում է ծիծարը):

Ֆելլա: Տես մնց է իրանից գնում: Կօչկարեօվ: Միջի մարդիս մտիկ տուէք, միջի  
մարդիս: Վարպետ ես, խնամիկասութիւն անել լաւ գի-  
տես: (Ծիծարը շարունակում է):

Ֆելլա: Խելքամադ եղաւ. ողորմած հոգի մէրդ  
անպատճառ քեզ աշխարհ է բերել ու խելքը կորցըել:  
(Քարկաչած դուրս է գնում):

ՏԵՍԻԼ Է.

Կօչկարեօվ, Ժեւակին:

Կօչկարեօվ: (Նարունակում է ծիծարը): Օ՛յ, չեմ կա-  
բող, չեմ կարող, ձշմարիտ՝ չեմ կարող, էլ ոյժ չը մնաց,  
ծիծարից թուլանում եմ: (Նարունակում է ծիծարիը):

Ժեւակին: (Նայիլով Կօչկարեօվին, ինքն եւս սկսում է  
ծիծարի):

Կօչկարեօվ: (Յողնած ընկնում է աթոսի վրայ): Օ՛յ,  
հոգիս դուրս եկաւ. թէ մէկ էլ ծիծարացել եմ, կը թու-  
լանամ, վէր կընկնեմ:

Ժեւակին: Ինձ դուր է գալիս ձեր ուրախ բնա-  
ւորութիւնը: Մեր նաւախմբում՝ կապիտան Բոլդրովի  
ձեռքի տակ՝ մի միջան կար—Անտօն իվանովիչ Պէտուխով,  
նա էլ ձեզ նման ուրախ բնաւորութեան տէր էր: Հե-  
րիք էր՝ որ մատիդ մէկը ցցէիր ու նրան ցոյց տայիր.  
յանկարծ կակէր ծիծաղել. Ասաւուծնի եմ երգւում, մին-  
չև երեկոյ ծիծաղը չէր կարողանում պահել: Դէ, մարդ  
որ նրան նայում էր, ինքն էլ սկսում էր ծիծաղել ու  
ծիծաղել:

Կօչկարեօվ: (Շունը քոնիլով): Մեղայ քեզ տէր, մի-  
ջայ քեզ: Ի՞նչ էր ախար փշել տխմար պառաւի խելքին,  
նրա ի՞նչ գործն էր աղջիկ մարդի տալը, տղայ, աղ-

Հիկ պսակելը: Այ, ես կը պսակեմ, այն, կը պսակեմ:  
Ժեւակին: Նրա գործը չէր: Ուրեմն, անհանաք, գուք  
կարնդ էք պսակել:

Կօշկարեօվ: Անտարակնյա, ում կամենաք, որի հետ  
կամենաք:

Ժեւակին: Եթէ այսպէս է, ինձ պսակեցէք այս  
տան տիրունու հետ:

Կօշկարեօվ: Զե՞զ: Զեր ընչի՞ն է պէտք ամուսնա-  
նալը:

Ժեւակին: Ի՞նչպէս, թէ ընչի՞ն է պէտք, ներեցէք  
տաել, որ ձեր հարցը փոքր ինչ տարօրինակ է: Շատ  
պարզ ու հասկանալի է, թէ ընչն են ամուսնանում:

Կօշկարեօվ: Զէ, գուք լսեցիք, որ այս աղջիկը ո-  
չինչ բաժինք չունի:

Ժեւակին: Չունեցողից ի՞նչ պահանջնես: Ի հարկէ,  
վատ բան է, որ չունի, բայց և այսպէս, այսպիսի մի  
հաճոյակատար, քաղցրաբարոյ և քաղաքավարի օրիոր-  
դի հետ առանց բաժինքի ևս կարելի է կեանք վարել:  
Մի փորբիկ սենեակ (Չորով չափ ու ձեւի օրինակն է ցոյց  
տալիս), իւր պստիկ նախասենեակով՝ վարագուրով մէջ  
տեղից բաժանած, կամ բարակ վանդակապատով կտրած:

Կօշկարեօվ: Բայց այդ աղջկայ ի՞նչն է ձեզ այդ-  
քան դուր եկել:

Ժեւակին: Ուղիղն ասած ինձ դուր է գալիս, ո-  
րովհետեւ ինքը հաստ կին—արմատ է: Կանացի գէր ու  
հաստ կազմուածքին ես մեծ սիրահար եմ:

Կօշկարեօվ: (Աչքի տակով նրան նայելով) խօսում է ա-  
ռանձին: Իւր աչքն իրան չի տեմնում, կարծես, մէջը  
դատարկ չմքած թամբաքոյի քսակ լինի: (Բարձր): Ո՞չ,  
ձեզ բոլորովին յարմար չէ ամուսնանալը:

Ժեւակին: Ի՞նչպէս:  
Կօշկարեօվ: Այնպէս: Այդ ի՞նչ է ձեր կապս ու

շէնք ու շնորհքը, խօսքը մէջերիս մնայ՝ աքաղաղի ու-  
քեր ունիք...

Ժեւակին: Աքաղաղի՞ն:  
Կօշկարեօվ: Ի հարկէ: Տեսքդ ընչի՞ն նման է:

Ժեւակին: Այսինքն՝ ի՞նչպէս թէ աքաղաղի ուքերը:  
Կօշկարեօվ: Աքաղաղի, կատարեալ աքաղաղի:

Ժեւակին: Իմ կարծեօք, այդ անձնականութեան  
դէմ վիրաւորանք է...

Կօշկարեօվ: Ես ասում եմ, որովհետեւ գիտեմ, որ  
դուք ուղղաղատ և խոնհմատիս մարդ էք, ես ուրիշն  
այդ չեմ ասիլ: Համեցէք, ես ձեզ կամուսնացնեմ, բայց  
ուրիշ աղջկայ հետ:

Ժեւակին: Ո՞չ ես կըխնդրէի, ո՞ր դուք ինձ ուրիշ-  
չի հետ չամուսնացնէք: Մեծ բարերարութիւն արած  
կըլինէք, եթէ այս աղջկայ հետ պսակէիք:

Կօշկարեօվ: Համեցէք, կամուսնացնեմ, միայն մի  
պայմանով: Դուք ոչինչ բանի մէջ մի խառնուիք, հարս-  
նացուի աչքին անդամ մի երեաք, ամէն բան ես ինքու  
կանեմ առանց ձեզ:

Ժեւակին: Բայց ի՞նչպէս թէ առանց ինձ: Մի ան-  
գամ գոնէ հարկաւոր է աղջկայ աչքին երեալ:

Կօշկարեօվ: Հարկաւոր չէ: Բոլորովին: Գնացէք  
ձեր տունն ու սպասեցէք: Այս երեկոյ ամէն ինչ կա-  
տարուած, վերջացած կըլինի:

Ժեւակին: (Ձերքը տրորում է): Այ, այդ հիանալի  
է: Իմ վկայագիրս, ծառայական ցուցակս հարկաւոր հօ-  
շեն: Կարելի է, հարսնացուն կըցանկանար վկայական-  
ներս աչքի անցնել: Չեռաց կըգնամ, կըբերեմ:

Կօշկարեօվ: Ոչինչ հարկաւոր չէ. գնացէք միայն  
տուն: Օրն այսօր՝ ես ձեզ տեղեկութիւն կըտամ: (Ճա-  
նապարհ է զնում նրան): Հրամելիք, գոզդ լայն բաց արա-  
նց չէ... Այս ի՞նչ բան է. Պոդկալեսինը չի գալիս.

Պարմանալի է: Միթէ մինչև հիմա միջկապի փոկն է ուղղում: Զբացապե՞մ շուտով կանչեմ:

Stuhl. Ø.

## ԱՀՀԿԱՐԵՈՒ, Ազաթեա Տիկոնովնա:

Ազատեա Տիմոնովնա: (Շուրջը նայեա): Ես ինչ է:  
Գնացի՞ն: Ոչ ոք չըկա՞լ:

Կօմի սրեալ։ Այս, գնացին։ Ոչ ոք չըկալ։

Ազամեա Տիբոնովնա: Ա՛լս, եթէ իմանայիք, թէ  
ևս Բ'նչպէս էի զողում: Ինձ այդպէս րան երբէք չի  
պատահած: Ի՞նչ զարմանալի մարդ է եղած այդ եա-  
ինիցան: Ի՞նչ գազան ու բարբարոս մարդ կըլինի իր  
կնոջ զլլիխն: Ինձ այնպէս է թուում, թէ որտեղ որ է,  
իսկոյն պիտի վերադառնայ:

Կլօչկարեօվ: Օօօ, նա այլ ևս չի վերադառնալ:  
Գլուխս կըտամ, եթէ այն երկուսից մէկն ու մէկը քիթն  
այստեղ տուն կրացկի:

Ազաթեա Տիսնովնա: Հապա երրորդը:

Կօշկարեօվի: Ի՞նչ երբորդ: -  
ԺԵւալին: (Գլուխը դրան տակից ներս կոխմալ): Մեռ-  
նալում եմ, մեռնում, որպէսզի իմանամ, թէ այս աղջիկն  
իմ մասին ի՞նչ կարծիք պիտի յայտնի եր քնքուշեկ բե-  
րանովր... իմ կոկոն վարդու...

Ազատության մասին օրենքը կազմության մեջ մտնելու պահին առաջարկվում է այս գործությունը:

**ՓԵԼԱԿԻԲ:** *Sեսմի, տեսմի:* (*Տրորում է ձեռքերը*):

Կօշկարեօվ: Կործանուի չարն սատանան. ևս էլ կարծում էի, թէ ում վրայ պիտի խօսք բաց անէք: Ախարհնա ի՞նչ մարդ է: Գլուխը գարմանով լիքն է: Բոլորովին լիմար է:

ԺԵւակին: Այս ինչ բան է: Խոստովանիմ, ես բռ-  
լորովին սրանից ոչինչ չեմ հասկանում:

Ազաթեա Տիխոնովինա: Բայց և այնպէս նա ար-  
տաքուստ շատ պատռական մարդ էր երևում:  
Կօչկարեօվ: Հարբեցնո՞ց:  
Ժեւակին: Աստուածո լկայ, չեմ հասկանում:  
Ազաթեա Տիխոնովինա: Միթէ հարբեցող էլ է:  
Կօչկարեօվ: Աւազակների աւագակը, փշանալու  
փնտչը:

Ժեւակին։ (Բարձր)։ Ո՞չ, ներեցէք, ես ձեզ չեմ խլանդ-  
րել իմ մասին այդպիսի բաներ խօսելու։ Մի գովասանք,  
մի նպաստաւոր խօսք իմ մասին՝ այդ այլ բան է։ Բայց  
որ այդպիսի խօսքերով, այդ ձևով, իմ մասին՝ Տէրը  
փրկէ։ Իսկ ուրիշի հասցէին՝ ձեր կամքն է։

Կօչկարեօվ: (Առանձին): Ո՞ր սատանան սրա առաջը կտրեց, այստեղ վերադարձրեց: (Ազաթիա Տիխոնովինային կիսամայն): Նայեցէք, նայեցէք, ոտքի վրա չի կարողանում կանգնել: Ամէն օր էդպէս ոտքերը շաշ ու փանջ է անում (երեսացնում է) <sup>1)</sup>: Դուրս վռնդեցէք, պոչը սառցին կապեցէք՝ վերջանայ: (Առանձին): Բակ Պօդկալիօսինը չըկայ որ չըկայ: Անպիտան արարած: Ես նրա օգտիցը կը գամ: (Գնում է):

StUhL d:

#### **Ազատեա Տիրոբնօվնա և Ժեւակինա**

ԺԵԼԱԿԻՒՆ: (Առանձին): Խոստանում էր գովել, փոխարէնն սկսեց հայհոյել: Շատ տարօրինակ մարդ է:  
(Բարձր): Դուք տիրուհի, մի՛ հաւատաք:

Ազաֆեա Տիխոնիսկիա: Ներեցք, ևս տկար եմ...  
գլուխս ցաւում է: (Ուզում է զնալ):

<sup>1)</sup> Всемирный. «Этакое Мыслете онь всякий день пишеть», — пр  
нгашацкимъ бѣ описанъ М. шашаф ѿѣа оиѣа вѣрѣа Европѣа Генрихъ.

ԺԵԼԱԿԻՆ: Գուցէ որ և է բանով ես ձեզ գուր չեմ  
գալիս: (Յոյց տալով խը զլուխը): Գուք մի ուշ դարձնէք,  
որ այստեղ փոքր ինչ ճաղատ է. այս ոչինչ. ջերմ ու  
տեսդի հետեանք է. շատ չի տեկիլ, կը մազակալի:  
Ազաֆիա Տիխոնովինա: Ինձ համար միենոյն է, թէ գուք  
ի՞նչ ունիք, կամ ի՞նչ չունիք:

ԺԵԼԱԿԻՆ: Եթէ ես, տիրուհի, ու դրակ հազնեմ, ե-  
րեսիս գոյնն աւելի սպիտակ կերկի:

Ազաֆիա Տիխոնովինա: Դուք ուրախացէք: Մնացէք  
բարեւ: (Գնում է):

### ՏԵՍԻԼ ԺԱ.

ԺԵԼԱԿԻՆ: (Միայն խօսում է, աղջկայ ետեւից): Սպասե-  
սեցէք, տիրուհի, խնդրեմ, պատճառն ասէք, թէ ընչի՞  
համար, ախար ընչի՞ համար: Կամ, գուցէ իմ վրայ մի  
որեւէ արատիք էք գտնում... գնաց, հեռացմաւ: Տարօ-  
րինակ դէպք: Կարծեմ, 17-րդ անգամն է՝ ինձ այսպի-  
սի դէպքեր պատճառում են. և բոլոր, համարեա, մի և  
նոյն ձեռվ: Սկզբում՝ կարծում ես, թէ գործը լաւ է  
գնում, բայց հէնց բանը վլուխ գալուն մօտենում է,—  
մէկէլ տեսար՝ մերժեցին: (Մտմտալով երթեւեկում է սինեա-  
լում): Այս... կարծեօք սա 17-րդ հարսնացուն է: Սա-  
կայն ես չը գիտեմ, թէ սրա ուզածն ի՞նչ է: Օրինակ՝  
սրան ես ի՞նչ անեմ, որ... ախար, ընչի՞ համար... (Մը-  
տածնով): Շատ անհասկանալի և մութը բան է: Այլ է,  
եթէ որ և է պակասութիւն ունենայի: (Ինքն իրան տընտ-  
զում է): Կարծեմ, ոչ մի փուտ (արատիք) չի կարելի  
դնել ինձ: Աստծուն փառք, բնութիւնն ինձանից ոչինչ  
չի խսայիլ: Անհասկանալի է: Զը գնամ արդեօք տուն  
և սնդուկներս քրքրեմ, մի բանի ոտանաւորներ ունիմ  
պահած, որոնց աղջեցութեան դէմ ոչ մի աղջիկ չի կա-

բող գիմադրել... Երդունամ եմ, գլուխս չի մտնում: Սկզբ-  
բումը թւում էր, թէ գործս յաջող էր ընթանում: Ինչ-  
պէս երկում է, գութանի մաճը պէտք է յետ շուռ  
տալ, <sup>1)</sup>: Ափսոս, հազար ափսոս: (Գնում է):

### ՏԵՍԻԼ ԺԲ.

Պօղկալեօսին եւ Կոչկարեօվ (ներս են զափիս երկուսը միա-  
սին եւ յիտ նայում):

Կօչկարեօվ: Նա մեղ չընկատեց: Տեսմը ինչպէս  
քիթն երկու գաղ կախած՝ թողեց հեռացաւ:

Պօղկալեօսին: Միթէ սրան ևս ուրիշների նման  
մերժեցին:

Կօչկարեօվ: Կարականապէս:

Պօղկալեօսին (ինքնարաւական ժախտով): Կարծեմ,  
մեծ անպատճութիւն է, եթէ մերժեն:

Կօչկարեօվ: Անշնչշտ:

Պօղկալեօսին: Ես դարձեալ չեմ հաւատում, որ,  
երբ թէ, այդ աղջիկը դէմ յանդիման ասած լինի նը-  
րանց, թէ ինքն ինձ բոլորից գերազաւում է:

Կօչկարեօվ: Գերադասեն ինչ է: Աղջիկը քեզ հա-  
մար խելքը թոցրել է: Մէր եմ ասում է: Քանի՞ ու  
քանի քաղցր ու քնքոյշ անուններ կացրեց քեզ. ինքն  
իրան անկրակ այրւում էր քեզ համար:

Պօղկալեօսին (ինքնարաւական ծիծաղում է): Եւ, ճշ-  
մարիտ, կինը եթէ ցանկանայ, ի՞նչ տեսակ խօսքեր  
ասես, որ չի հսարիլ, խօսքեր՝ որ մարդ յաւիտեանս  
չի կարող մտածել. օրինսկ՝ իմ կապիկս, իմ ցեցիկս,  
իմ սկնեկս:

Կօչկարեօվ: Դեռ այդ ի՞նչ խօսքեր են, երբ որ

1) Բնագրում «Приходится поворотить назад оглохи».

կամուսնանաս, կը տեսնիս, թէ առաջին երկու ամսում  
ինչ բառեր ես լուսմ. ուղղակի մոմի պէս կը հալուիս:

Պօդկալեօսին: (ծիծաղելով) Կարծնւմ ես:

Կօշկարեօվ: Ազնիւ խօսք: Դէհ, այժմ շտապենք,  
մեր գործին կենանք: Այս բռպէիս սիրտ բաց արա  
աղջկանը, սէրդ յայտնիր և ձեռքը խնդրիր:

Պօդկալեօսին: Ի՞նչ ես խօսում, ի՞նչպէս թէ այս  
բռպէիս:

Կօշկարեօվ: Անպատճառ այս բռպէիս... և ահա  
ինքը գալիս է:

ՏԵՍԻԼ ՃԳ.

### Նայն եւ Ազաթեա Տիխոնովնա

Կօշկարեօվ: Ներկայացնում եմ ձեզ, տիրուհի, այս  
մահկանացուին, որին գուք տեսնում էք: Այս աստիւ-  
ճան կաթողին յուղմունքով սիրահարուած, դեռ չի  
լուսուած, Աստուած հեռու տանի, իմ թշնամուն չէի  
ցանկանալ:

Պօդկալեօսին (Կօշկարեօվի թեւին հրելով եւ կամաց): Է՛,  
եղբայր, գու, կարծեօք, չափն անց կացըիր:

Կօշկարեօվ (Պօդկալեօսինին): Ոչինչ, ոչինչ: (Աղջկանը  
կամաց): Համարձակ կացէք, բարեկամս շատ համեստ է,  
աշխատեցէք, որքան կարելի է, ձեզ ազատ պահեր: Մի  
տեսակ յօնքերդ ոլրեցէք, կամ աչքերդ ցած թողէք,  
որ յանկարծ կիսամորթ անէք էս անիրաւին, կամ թէ  
մի հնարքով ուսերդ բաց արէք, աչքի առաջին տնկե-  
ցէք, թող մտիկ տայ մեր անիծածը: Շատ իզուր դուք  
չէք հագել ձեր թեւերը կարճ շորերը, բայց այսքանն էլ  
կըբաւէ: (Բարձր): Ուրեմն, ես թողում եմ ձեզ միայն,  
որ ուրախ ժամանակ անցկացնէք: Մի բռպէ ես կը-  
մտնեմ ձեր սեղանատունն և խոհանոցը և կըտնաղեմ.

Հարկաւոր է կարգադրութիւն անել: Իսկոյն կըգայ սե-  
ղանապեալ, որին ընթրիքը պատուէր է տուած, կա-  
րելի է զինիներն արդէն բերուած լինին... ցտեսու-  
թիւն... (Պօդկալեօսինին) վատահ և համարձակ: (Գնում է):

ՏԵՍԻԼ ՃԳ.

Պօդկալեօսին եւ Ազաթեա Տիխոնովնա

Ազաթեա Տիխոնովնա: Շնորհ արէք, ինդրէմ,  
նստեցէք:

(Սատում են եւ լուս):  
Պօդկալեօսին: Դուք, տիրուհի, սիրում էք զրօու-  
նել կառքով կամ ձիով:

Ազաթեա Տիխոնովնա: Ի՞նչպիսի զրօսանք էք ա-  
սում:

Պօդկալեօսին: Ամառ ժամանակն ամարանոցում  
նաւակով զրօսնելը շատ ուրախալի է:

Ազաթեա Տիխոնովնա: Այո, երբեմն երբեմն մենք  
ծանօթների հետ զրօսանքի գնում ենք:

Պօդկալեօսին: Յայտնի չէ, այս տարի ի՞նչպիսի  
ամառ կըլինի:

Ազաթեա Տիխոնովնա: Ցանկալի էք, որ լաւ լինէր:  
(Երկուսն էլ լուս են):

Պօդկալեօսին: Դուք, տիրուհի, ի՞նչ ծաղիկ էք ա-  
ւելի սիրում:

Ազաթեա Տիխոնովնա: Այո, որ խիստ հոտ ունի-  
մեխակ:

Պօդկալեօսին: Տիկիններին ծաղիկը շատ է վայե-  
րում:

Ազաթեա Տիխոնովնա: Այո, սիրելի պարապմունք  
է: (Լուսթիւն), Անցեալ կիրակի գուք ո՞ր եկեղեցին էիք.  
գնացել:

Պօդկալեօսին: Համբարձման եկեղեցին, իսկ մի շաբթ սրանից յառաջ՝ Ղազանեան մայր եկեղեցումն էի<sup>1)</sup>: Բայց, ի հարկէ, որ եկեղեցումը կամենաս՝ աղօթիր, մի և նոյն է: Ղազանեան տաճարը միայն աւելի շքեղ է: (Լոռում են. Պօդկալեօսինը մատներով բարախում է սեղանին): Այ, շուտով Եկատերինգօֆի գրոսանքները կակուին:

Ազաթեա Տիխոնովինա: Այս, կարծեմ, մի ամսից յետոյ:

Պօդկալեօսին: Ամիս էլ շի քաշիւ:

Ազաթեա Տիխոնովինա: Երկի, ուրախ զրօսանքներ կը ի՞նին:

Պօդկալեօսին: Այսօր ամսի ութն է. (մատնահաջիւ է անում) ինը, տասը, տասն ու մէկ... քսան երկու օրից:

Ազաթեա Տիխոնովինա: Երկակայեցէք, որքան շուտ:

Պօդկալեօսին: Այս օրը մինչև անգամ ես չեմ հաշւում: (Լոռութիւն): Ի՞նչքան համարձակ է Ռուս ժողովուրդը:

Ազաթեա Տիխոնովինա: Ի՞նչպէս:

Պօդկալեօսին: Այ, օրավարձ բանուրները: Կանգնում են տների ամենաբարձր ծայրին... ես անցնում էի մի տան մօտով. ծեփ քաշողը պատը ծեփում էր և չէր վախենում:

Ազաթեա Տիխոնովինա: Բ' մմ... Այդ ո՞ր տեղ:

Պօդկալեօսին: Այն ճանապարհի վրայ, որտեղից ես ամեն օր անցեմ կինում և գնում դիպարտամենտ: Գիտէք՝ ես ամեն առաւօտ ծառայութեան եմ գնում: (Լոռութիւն): Պօդկալեօսինը նորից մատներով սեղանը թխիւկացնում է: Վերջը՝ զիսարկը վերցնում է եւ մնաս բարեւ ասում):

Ազաթեա Տիխոնովինա: Դուք միթէ արդէն կամենում էք ըըը...»

<sup>1)</sup> Ղազանեան մայր եկեղեցին Ա. Գետերբուրգի.

Պօդկալեօսին: Այն, ներողութիւն, գուցէ ես ձեզ ձանձրացրի:

Ազաթեա Տիխոնովինա: Այդ ի՞նչ խօսք է. ընդհակառակն, ես պիտի շնորհակալ լինիմ ձեզանից, որ այսպէս ուրախ ժամանակ անցկացըինք:

Պօդկալեօսին: (Ժատալով): Բայց, իսկապէս, ինձ թւում է, թէ ձեղ ձանձրութիւն տուի:

Ազաթեա Տիխոնովինա: Հաւատացնում եմ ոչ:

Պօդկալեօսին: Հապա, եթէ ոչ, ինդրեմ ուրեմն թոյլ տաքինձ ուրիշ ժամանակ ես, երբ եփցէ, երեկոյին...

Ազաթեա Տիխոնովինա: Մեծ ուրախութեամբ: (Միմանց դրւի են իշեցնում: Պօդկալեօսինը վնում է):

### ՏԵՍԻԼ ԺԵ.

Ազաթեա Տիխոնովինա: (Միայն) Ի՞նչ արժանաւոր մարդ է: Ես նրան հիմա միայն լաւ ճանաչեցի: Ճիշտ, որ անկարելի է նրան չը սիրել, և ինչ լացիցի է, և համեստ է: Այն, նրա բարեկամը փոքր ինչ առաջ ուղղի էր ասում: Ափսոս, որ շատ շուտ գնաց: Ես կը ցանկանայի դարձեալ լսել նրա խօսակցութիւնը: Ի՞նչ քաղցր է նրա հետ ասուլիս անելլը: Գլխաւորապէս՝ լաւը հէնց էն է, որ գատարկաբանութիւններ չի անում: Ես ինքս էլ ուղում էի նրան մի երկու խօսք ասել, բայց մեղքս ինչ թագցնեմ, քաշուեցի. սիրտս սկսեց գողգողալ... Ի՞նչ հրաշալի մարդ է: Գնամ հօրաքրոջս պատմեմ: (Գնում է):

### ՏԵՍԻԼ ԺԶ.

Պօդկալեօսին և Կօչկարեօվ (մանուք են)

Կօչկարեօվ: Ախար ընչու տուն: Ի՞նչ յիմարութիւն: Ընչու գնալ տուն:

Պօդկալեօսին: Այլ ևս ընչու պիտի մնայի այստեղ:  
Ի՞նչ որ պատճաշ էր, ամէնս արդէն ասացի:  
Կօջկարեօվ: Ուրեմն, սիրտգ աղջկանը բաց արթիր:  
Պօդկալեօսին: Բանն այդէ, որ սիրտս գեռ բաց չարի:  
Կօջկարեօվ: Ա՛ռ քեզ տրաքոց, ընչու չը բաց արթիր:  
Պօդկալեօսին: Ի՞նչ էիր ուզում, որ գեռ հետն ա-  
ռաջուց բան չը խօսեցած, ոչ տարած, ոչ բերած՝ ա-  
սէի. «օրինրդ, եկէք ամուսնանանանք միասին»:  
Կօջկարեօվ: Հապա ի՞նչ էիք ամբողջ կէս ժամ  
գլուխներիցդ գուրս տալի:  
Պօդկալեօսին: Ամեն բանի վրայ խօսեցինք, և ես  
մեծապէս գոն եմ, շատ լաւ ժամանակ անցկացրինք:  
Կօջկարեօվ: Ախար, ինքդ գատիր. Երբ պիտի մնաք  
ամէն ի՞նչ գլուխ բերենք, մի ժամից պիտի եկեղեցի  
գնալ պսակուելու:

Պօդկալեօսին: Ցնդել հօ չես; Այսօր պիտի պսակ գնալ:  
Կօջկարեօվ: Եւ ընչու չէ:  
Պօդկալեօսին: Այսօր գնալ պսակ:  
Կօջկարեօվ: Դու չէ՞ր, որ խօսք տուիր, դու չէ-  
՞ր, որ ասացի՞ք հէնց որ փեսացոները գուրս կը  
վանդուն, իսկնյն, և եթ ես պատրաստ եմ պսակուելու:  
Պօդկալեօսին: Ես հիմա էլ իմ խօսքից յետ չեմ  
կանդնում, բայց ոչ այս բոլէիս: Գոնէ, մի ամիս պիտի  
դադար տալ:

Կօջկարեօվ: Մի ամի՞ս:  
Պօդկալեօսին: Այն, անշնւշտ:  
Կօջկարեօվ: Խելքդ կորցրէլ ես, ի՞նչ է:  
Պօդկալեօսին: Հա, ամսից պակաս անկարելի՞ է:  
Կօջկարեօվ: Դումը գլուխ (փթած կոճդ) արդէն ես  
սեղանապետին ընթրիքը պատուէր եմ տուել: Քեզ եմ  
ասում, իվան կուզմիչ, կամակոր մի լինել, հոգիս, ա-  
մուսնացիր այժմ և եթ:

Պօդկալեօսին: Աստուածանից երկիւղ քաշիր, սի-  
րելիս, ի՞նչ եռ ասում, այժմ ի՞նչպէս է կարելի:  
Կօջկարեօվ: Իվան կուզմիչ, եռ եմ ինդրում, եթէ  
ոչ քո խաթեր, գոնէ իմ խաթեր ամուսնացիր:  
Պօդկալեօսին: Հաւատա՞ անկարելի՞ է:  
Կօջկարեօվ: Կարելի՞ է, սիրելիս, ամեն բան կա-  
րելի՞ է. աղաչում եմ, հոգի ջան, կողքիդ մի ընկնի:  
Պօդկալեօսին: Հաւատա՞ ոչ. անյարձար է, միան-  
գամայն անվայել է:  
Կօջկարեօվ: Ի՞նչն է անվայել: Քեզ ով ասաց: Ինքդ  
դատիր, ախար, դու խելահաս մարդ ես, ես քեզ շողո-  
քորթելու համար չեմ պնդում. Նրա համար չեմ պըն-  
դում, նրա համար չեմ սովիպում, որ դու երսպեկտօր  
ես, ես միայն շատ սիրելուց եմ ասում... Դէն, բա-  
ւակն է, հոգիս, վճուիր, խոհական և բանիրուն մար-  
դի աչքով նայիր գործին:  
Պօդկալեօսին: Եթէ հնար լինէր, ես արդէն...  
Կօջկարեօվ: Իվան կուզմիչ, իմ արջնւելս, իմ սի-  
րունիկա: Կամենաս ծունկ չոքեմ առջեղ:  
Պօդկալեօսին: Ախար, ընչու:  
Կօջկարեօվ (ծնկազը): Տես, ահա առջեղ ծունկ եմ  
չոքէլ: Աղաչում եմ: Յաւիտեանս չեմ մոռանալ քո կա-  
մակատարութիւնը. կողքիդ մի ընկնիւ, հոգի ջան:  
Պօդկալեօսին: Անկարելի՞ է, եղբայր, իսկն եմ ա-  
սում, անկարելի՞ է:  
Կօջկարեօվ (Բարկութեամբ վերկննալով): Խնդ:  
Պօդկալեօսին: Հայհոյիր, ինչքան կամենաս:  
Կօջկարեօվ: Յիմար անասուն: Այսպէս տխմար  
դեռ չի ծնած:  
Պօդկալեօսին: Հայհոյիր, հայհոյիր:  
Կօջկարեօվ: Իսկ այսքան տանջանքն ում համար  
էի կրում, ընչու էի գլուխս մահի տալիս: Այս բոլո-

բը, յիմար, քո օգտի համար էր: Ինձ լինչ: Հէնց հիմա  
քեզ կը շպրտեմ կերթամ: Իմ լինչ գործն է:

Պոլկալիսին: Ո՞վ ինդրեց քեզ, որ չարչարուիս,  
կամենաս՝ թող ու յետ քաշուիր:

Կօչկարեօվ: Ախար, դու ոտքով գլխով կըկորչիս,  
առանց ինձ ոչինչ անել չես կարող: Եթէ քեզ չամուն-  
նացնենք, մինչև մահդ նոյն տիմարը կըմնաս:

Պոլկալիսին: Թո լինչ փոյթն է:

Կօչկարեօվ: Ես քեզ համար եմ աշխատում, այ  
դատարկ գլուխ:

Պոլկալիսին: Թո աշխատութիւնն ինձ հարկաւոր չէ:  
Կօչկարեօվ: Եթէ այդպէս է, դժոխքի տակն ան-  
ցիր: Գհօռը զնա, ջանդամը:

Պոլկալիսին: Կերթամ, կերթամ:

Կօչկարեօվ: Բարի ճանապարհ:

Պոլկալիսին: Ի՞նչ կայ, թող լինի, կերթամ:

Կօչկարեօվ: Գնա, գնա, Աստուած տայ, վայր ընկ-  
նես անմիջապէս ու ոտքդ կոտրեմ: Սրտով ցանկանում  
եմ, որ հարբած կառապանի ծիու լծակը մինչև  
կոկորդդ թաղուի: Դու ցնցոտի վալաս ես, ոչ աստի-  
ճանաւոր: Երգումս երգում է, որ այս բողէից մեր մէջ  
ամէն ինչ վերջացաւ, այլևս աչքիս չերեսս:

Պոլկալիսին: Եւ չեմ երեալ: (Գնում է):

Կօչկարեօվ: Գնա քո հին բարեկամ Սադայէլի մօտ:  
(Գուրը բանում է եւ ետեւից գոռում է): Յիմար:

### ՏԵՍԻԼ ԺԷ.

Կօչկարեօվ (միայն, սաստիկ յուգուած, յետ ու առաջ է  
շարժեւում):

Դէն, երբ և իցէ աշխարհում եղած է այսպիսի  
մարդ: Այ յիմար: Բայց եթէ բանն ուղիղ խոսե-

լուն հասնի, ես ևս լաւ բարի պտուղն եմ: Ես ձեր ա-  
մէնքիդ գատողութեանն եմ թողում: Խնդրեմ ասէք: յի-  
մար չեմ ես, հաստավլուիս չեմ: Ընչու եմ հոգեհան  
լինում, ինչ եմ գորում գոչումը բարձրացրել, քիչ է  
մնում, կոկորդս ցամաքի: Խնդրեմ, ասէք՝ նա իմ լինչն  
է: ընտանին է, ազգ ու ազգականն է: Կամ թէ ես  
նրա ինչն եմ: գայակն եմ, հօրաքնյը—մօրաքնյը եմ,  
աներն եմ: սանահէր—սանամը ըն եմ, թէ ինչն եմ:  
Ո՞ր սատանան կողքիս բգեց, ընչու եմ նրա համար  
գլուխ տրաքացնում, հանգիստ ու դադարս կոր-  
ցնում: գժոխքի տակը թող անցնի: Ի՞նքս չեմ հաս-  
կանում, թէ ո՞ր քամին փէց խելքիս: Այդպէս, մար-  
կանում ինքն էլ չի հասկանում, թէ այս ու  
գըս շատ անգամ լինքն էլ չի գործում: Այ վատթար կենդանի.  
այ զգուելի ու անճոռնի արարած: Բոնես, բոռնցըը  
քաշեն և այդ անասունի քթէն, բերանին, ատամներին,  
ականջներին ու ամէն տեղին թրախք ու շրախք: (Կա-  
տաղի բարկութեամբ օղի մ.ջ մի քանի հարուածներ է տարութե-  
րում): Ախար բարկութիւնս լինչը է գալիս. թողեց ու  
հեռացաւ.—ամենեին հոգի չէ, նրա համար միենոյն է,  
թէ սանգը ջուր լցնես, ու ծեծես 1): Արի՛ ու համբերի՛:  
Հիմա կը գնայ, կը մտնի իւր տունը, երկար ու մէկ  
կը ձգուի ու չիրուխը կը փատացնի: Ախ, ատելի ա-  
կը բարած: Աշխարհումս անճոռնի ու ատելի մարդիկ շատ  
են լինում, բայց սրա նմանը—սա խելքից մտքից  
գուրս բան է, ոչ կայ և ոչ կարող ես երկալայել: Երդ-  
ւում եմ ամենայն սրբութեամբ: Այս չեղաւ, պէտք է  
գնալ այն ծոյլ անպիտանին յետ բերել: Զեմ թողնիւ  
գլուխ առնի, ծլկուի, կերթամ, կը բերեմ փուչ կեն-  
ուանուն, կը բերեմ: (Գուրս է վագում):

1) Բնագրում. „Съ него все это такъ, какъ съ гуси вода“.

ՏԵՍԻԼ ԺԲ.

Ազամեա Տիխոնովնա (Ներս է գտիս): բհցուն

Միրտս այնպէս է դողդողում, որ ասել չեմ կարող: Ո՞ր կողմը դառնում եմ, ամեն տեղ աշքիս առջև իվան կուզմիչն է անկուտած: Ուղիղ է, որ մարդ իր ճակատի գրուածից փախչի չի կարող: Փոքր ինչ առաջ ուզում էի ուրիշ բաների վրայ մտածել, բայց ինչ գործ որ բանում էի՝ օրինակ՝ փորձեցի թել վրայ տաւ քսակ կարել, ամէն բանում իվան կուզմիչն էր գլուխը ներս լցուում, բուռս մտնում: (Նոելով): Վերջապէս, շուտով իմ վիճակս սպասում է փոխուելու: Ինձ կառնեն, կը տանին եկեղեցի... յետոյ կըթողնեն տղամարդի հետ մէն-մէնակ—Օճֆի: Դողս բանում է: Գնաս բարեւ, իմ օրիորդական անցեալ կեանք: (Ալիս է): Այնքան տարի խաղաղ ու հանգիստ անցկացրի... Ապրի, ապրի ու հիմա թող, զնա մարդի: Որքան ցաւ ու հոգս: Երեխէք, տղէք—պէծ ու կրակներ, մի կողմից էլ՝ աղջիներ, կըհամնին, կըմհաճանան—հիմա մարդի տուր: Լաւ է, եթէ օրինաւոր, շնորհքով մարդիկ պատահին, իսկ եթէ հարբեցողներ լինին, եթէ այնպիսիները լինին, որ եղած չեղածն առաջին անդամից թըղթախաղում վատնեն: (Նորից սկսում է կամաց կամեկալ): Օրիորդական վիճակումն նոյնպէս չըյաջողուեց ինձ ուրախ կեանք վարել, օրիորդութեանս 27 տարին էլ չըլլացրի... (Զայնը փոխելով): Իվան կուզմիչն ընչի է այսքան ծանր ու բարակ անում, ուշանում:

ՏԵՍԻԼ ԺԲ.

Ազամեա Տիխոնովնա եւ Պօդկալեօսին.

(Որին կօշկարիօվն երկու ձեռքով դռան միջից հրում, ձրգում է թեմի վրայ):

Պօդկալեօսին: (Կարկամելով): Ես տիրուէի՛, եկել եմ ձեզ մի փոքրիկ բան բացատրելու...միայն կը ցանկայի կանխօրէն խմանալ—արդեօք իմ արածս ձեզ խորթ չէր թուիլ:

Ազամեա Տիխոնովնա: (Աքերը կորացնելով): Ի՞նչ բան է:

Պօդկալեօսին: Ո՞չ, տիրուէի՛, դուք դեռ առաջուց ասացէք՝ տարօրինակ չէ՞ր թուիլ:

Ազամեա Տիխոնովնա: (Նոյնպէս): Զը գիտեմ՝ ի՞նչ բան է:

Պօդկալեօսին: Եկէք խոստովանուեցէք, երեկի, ինչ որ ասեմ, ձեզ խորթ կը թուի:

Ազամեա Տիխոնովնա: Ներողութիւնս, ի՞նչպէս է կարելի, որ խորթ թուի: Ինձ համար շատ ուրախալի է, ինչ որ ձեզանից լսեմ:

Պօդկալեօսին: Բայց ինչ որ հիմա պիտի ասեմ, դուք երբէք չէք լսած: (Ազամեա Տիխոնովնան աչքերն եւս աւելի կորացնում է: Այդ իսկ միջոցին ներս է գալիս կօշկարիօվն եւ կանգնում Պօդկալեօսինի հուելը): Այս, Ի՞նչ բան է...ըըլլ'... բայց առաւել լաւ է, թողնենք ուրիշ ժամանակի:

Ազամեա Տիխոնովնա: Ախար ի՞նչ բան է:

Պօդկալեօսին: Այս է, որ... խոստովանք մնայ՝ ես կամենում էի այժմ և եթ ձեզ յայտնել, բայց գեռ մի տեսակ տարակուում եմ:

Կօշկարեօվ: (Կամաց մրթմրթում եւ ծեռները խաչում է): Տէր իմ Աստուած, ի՞նչպէս մարդ է սա: Կատարեալ

քրքրուած տրեխ է և ոչ թէ մարդ, սա մարդկութեան  
թքանքն է, մարդկութեան ծաղը ու ծանակն է:

Ազաֆեա Տիխոնովնա: Ել ընչի՞ էք տարակուսում:  
Պօդկալիեօսին: Զը գիտեմ, մի տեսակ կասկածն  
ինձ պատել է:

Կօչկարեօվ: (Բարձր): Ի՞նչ յիմարութիւն, ի՞նչ յի-  
մարութիւն: Դուք, տիրուհի, միթէ չէք տեսնում, որ  
սա ինդրում է ձեր ձեռքը: Սա ուզում է ձեզ յայտնել,  
որ ինքն առանց ձեզ ապրել, կեանք վարել չի կարող:  
Սա այսքանն է հարցնում՝ համաձայն էք գուք սրան եր-  
ջանկացնելու:

Պօդկալիեօսին: (Համարեա վախեցած, հրում է Կօչկա-  
րեօվին և շտապ խօսքիրով ասում): Աստուածդ սիրես, ի՞նչ  
ես ասում:

Կօչկարեօվ: Հիմա ի՞նչ էք ասում, տիրուհի, վճռում  
էք գուք այս մահկանացուին երջանկացնել:

Ազաֆեա Տիխոնովնա: Երբէք չէի կարող մտածել,  
թէ ես կարող կը լինէի ում և իցէ երջանկութիւն պար-  
գեել... Յամենայն դէպս, ես համաձայն եմ:

Կօչկարեօվ: Բնական է, շատ բնական է: Այդ վա-  
ղուց պէտք է լինէք : Տուէք ձեր ձեռքերը:

Պօդկալիեօսին: Այս բոպէիս: (Ուզում է Կօչկարեօվի  
ականջն ինչ որ փափալ: Կօչկարեօվը բռունցը է ցոյց տալիս  
և յօնքերը խոժոռում: Պօդկալիեօսինը ծեռքը տալիս է):

Կօչկարեօվ: (Միացնելով նրանց ծեռքերը): Ուրեմն,  
Աստուծոյ օրհնութիւնը թող լինի ձեզ վրայ: Համաձայն  
եմ և վաւերացնում եմ ձեր միութիւնը: Ամուսնութիւ-  
նը մի այնպիսի բան է... Ամուսնութիւնը մի և նոյնը  
չէ, թէ նստես կառք և գնաս մի տեղ, ամուսնութիւնը  
այլ տեսակ պարտականութիւն է: Այդ պարտականու-  
թիւնը... Ես հիմա ժամանակ չունիմ, մի ուրիշ անգամ  
կը բացարեմ, թէ ո՞րպիսի պարտականութիւն է ա-

մուսնութիւնը: Հապա, իվան կուզմիչ, համբուրիբ քո  
հարսնացուին: Դու այժմ իրաւունք ունիս այդ անհ-  
լու: (Ազաֆեա Տիխոնովնան աջերը կորացնում է): Ոչինչ,  
տիրուհի, ոչինչ, այդպէս է հարկաւոր, թող համբուրի:

Պօդկալիեօսին: Ո՛չ, տիրուհի, ներողութիւն, այժմ  
արդէն թոյլ տուէք: (Համբուրում է եւ ծեռքը թնում): Ի՞նչ  
հրաշալի և քնքուշիկ ձեռք: Ինչո՞ւ է, տիրուհիս, ձեր  
ձեռքն այսպէս քնքուշիկ... Դիտէք ի՞նչ, տիրուհիս, ես  
ցանկանում եմ, ես կամենում եմ, որ մեր պատկն իս-  
կոյն և եթ կատարուի, անշուշտ, իսկոյն և եթ:

Ազաֆեա Տիխոնովնա: Ի՞նչպէս թէ իսկոյն և եթ  
շուտ չէ, կարելի է շատ շուտ է:

Պօդկալիեօսին: Լսել անգամ չեմ ուզում, ես կամե-  
նում եմ, դեռ աւելի՛ շուտ, որ այս բոպէիս մեր պա-  
կը կատարուի:

Կօչկարեօվ: Կեցցես, հիանալի՛: Ա՛յ, աղնիւ մարդ:  
Խոստովանք լինի, ես միշտ քեզանից շատ ու շատ բա-  
ներ եմ սպասել ապագայում: Եւ իրաւ, տիրուհի՛, դուք  
շտապեցէք շուտառվ հագնուելու: Ուղիղ ասած՝ արդէն  
ուզարկել եմ կառքը բերելու և հրաւիրել եմ հիւրեր:  
Մեր հիւրերը բոլորիքեան ուղղակի գնացել են եկեղե-  
ցի: Ինձ յայտնի է, որ ձեր թագի տակի շմագգեստն  
արդէն պատրաստ է:

Ազաֆեա Տիխոնովնա: Ի՞նչպէս չէ, վաղուց է պատ-  
րաստ: Մի բոպէում ես կը հագնուեմ:

### ՏԵՍԻԼ Ի.

Կօչկարեօվ եւ Պօդկալիեօսին:

Պօդկալիեօսին: Է՛, եղբայր, շնորհակալ եմ: Ես հի-  
մա տեսնում եմ քո ինձ արած լաւութիւնները: Հարա-  
զար ծնող հայրս չէր անիլինձ համար այն՝ ի՞նչ որ դու ա-

բիր: Ես տեսնում եմ, որ դու արիր ի սէր բարեկամութեան: Շնորհակալ եմ, եղբայրս, յաւիտեանս յաւիտենից չեմ մոռանալքո արած լաւութիւնը: (Զգացուած): Առաջիկայ գարունը կերթամ հօրդ գերեզմանն օրհնել կը տամ:

Կօշկարեօվ: Ոչի՞նչ, եղբայր, ինքս սրտանց ուրախ եմ: Հիմա, մօտ արի, քեզ համբուրեմ: (Համբուրում է Պօղկալեօսինի նախ՝ մէկ թուշը, յիտոյ՝ միւսը). Աստուած տայ, որ յաջող և բաղդաւոր լինիս: (Համբուրում են), միութեան մէջ լինիս, վիճակիցդ գոն լինիս, զաւակները չորս կողմդ պատեն:

Պօղկալեօսին: Շնորհակալ եմ, եղբայրս: Ես այժմ միայն ճանաչեցի, թէ ի՞նչ է կեանքը. այժմ իմ աչքեառաջ բացուեց ըստ ամենայնի մի ուրիշ աշխարհ: Հիմա ես տեսնում եմ, որ այս ամէնը որ կայ, շարժում է, ապրում է, զգում է, մի տեսակ ցնդում, գոլորշանում է և ինքդ էլ, կարծես, լաւ չես հասկանում, թէ ի՞նչ է կատարում: Իսկ յառաջ ես ոչ տեսնում էի այս ամէնն և ոչ հասկանում, մի խօսքով՝ գուրկ էի մարդկային ամենատեսակ ըմբռնողութիւնից և ճանաչողութիւնից: Ոչ գատում էի, ոչ խորամուխ լինում, և միայն ապրում էի այնպէս՝ ինչպէս բոլոր մարդիկն են ապրում:

Կօշկարեօվ: Ուրախ եմ, շատ ուրախ եմ: Հիմա ես գնամ տեսնիմ սեղանն ի՞նչպէս է պատրաստուած, Մի բոպէից կը վերապահնամ: (Առանձին): Յամենայն դէպս, լաւ կը լինի, եթէ սրա գլխարկը թագցնենք: (Վերցնում է Պօղկալեօսինի պիսարկը և հետը տանում):

### ՏԵՍԻԼ ԻԱ.

Պօղկալեօսին (միայն):

Եւ իրաւ, ի՞նչ էի ես մինչև օրս: Հասկանում էի կեանքի նշանակութիւնը: Ոչ, չէի հասկանում, ոչի՞նչ

չէի հասկանում: Ի՞նչ էր իմ ամուրի կեանքը, ի՞նչ էր իմ նշանակութիւնը, ի՞նչ էի կատարում: Ապրում էի, զեպարտամեննտն էի գնում գալիս, ճաշում էի, քնում էի —մի խօսքով՝ աշխարհիս մէջ մի ամենահասարակ, մի սովորական մարդ էի: Այժմ միայն պարզ է, թէ որքան յիմար են նրանք, որ չեն ամուսնանում: Եւ եթէ լաւ նայենք՝ որքան այդպիսի կոյրեր կան աշխարհումը: Եթէ ես մի որ և է աշխարհի թագաւոր լինէի, ես հրաման կարձակէի, որ բոլորեքեան ամուսնանան, ամեներեան անխտիր, որ իմ պետութեան մէջ ոչ մի ամուրի մարդ չը մնար: Օ՛հ... երբ մտածում ես, թէ մի քանի բոպէ, և ահա ինքդ կնոջ տէր ես... ահա, յանկարծ դու պիտի ճաշակես այն քաղցրութիւնը, այն երջանկութիւնը, որպիսին միայն առակներումն է պատմուում, այն երջանկութիւնն եմ ասում, որ արտայայտել չես կարող, որի համար բառ չես գտնում լիզուով արտասանելու: (Փօրբ ինչ լուսիթիւնից յիտոյ): Բայց և այնպէս, ինչ կամենում ես՝ ասա, միայն երբ այս բանի մասին լաւ մտածում ես, չափ ու ձեփ տակ ես զնում, կարծես, մի տեսակ սարսափ համակում է քեզ: Ամբողջ կեանքը, մինչև վերջին շունչդ, այսպէս, թէ այսպէս, քեզ կապես, կաշկանդես և վերջը՝ ոչ կարողանաս բերան բանալ, ոչ խօսքիցդ յետ դառնաւ, ոչ արածիդ վրայ զգջալ. միով բանիւ, ոչի՞նչ և ոչի՞նչ: —Արածդ արած է, եղածն եղած վերջացրած է: Այ, հէսց այժմ իսկ, հէսց հիմա, չի կարելի տուած խօսքից յետ կանգնել: Մի բոպէ և ահա թագի տակ ես: Թողնել հեռանալ այլ ևս անկարելի է: Կառք և ամենայն ինչ արդէն պատրաստ է... բայց միթէ իրաւ չի կարելի թողնել հեռանալ: —Բնական է, որ չի կարելի: Դուների մօտ և ամենայն տեղ մարդիկ են կանգնած: Կը հարցնեն՝ ընչու ես զնում:... Ո՞չ չի կարելի...

Բայց, ահա, լուսամուտը բաց է. ի՞նչ կը լինի. եթէ լուսամտիցը...—Ո՛չ, չի կարելի, մինչև իսկ անվայել է. լուսամուտն էլ բարձր է: (Մոտենում է լուսամուտին): Դիցուք՝ այնքան էլ բարձր չէ. հիմքն է միայն, այն էլ ցած է: Ո՛չ, ի՞նչպէս է կարելի, գլխարկս էլ չըկայ: Առանց գլխարկի անկարելի է, անյարմար է:... Բայց միթէ առանց գլխարկի չի կարելի: Ի՞նչ վասս, եթէ փորձեմ: Արի, փորձեմ: (Կանգնում է լուսամուտի վրայ եւ ասելով) «տէր Աստուած, դու յաջողեն»: (Թուզում է փողոց թիմի հոտերը նա տնքում եւ ափ ու վախի է անում): Ո՞հ, բարձր էր: Է՞յ, կառապան:

Կառապանի ձայնը: Կառքը մօտ բերեմ:

Պօլիախօսինի ձայնը: Կանաւկայի (գետակ Պետերբուրգում) փողոցը, Սիմէօնեան կամուրջի մօտ:

Կառապանի ձայնը Մի հատ երկու շահանաց, ոչ աւել, ոչ պակաս:

Պօլիախօսինի ձայնը: Մօտ արի: Քշիւր: (Լսում է հոգացող կառքի ձայն):

ՏԵՍԻԼ ԻԲ.

**Ազաթեա Տիխոնովիսա (Ենրա է զալիս երկիւղալից. քազի ասկի հագուստով և աշխերը կօրացրած):**

Ի՞նքս էլ չգիտեմ, թէ ինձ ի՞նչ է պատահել: Նորից ամօթս գալիս է և դողս բռնեց: Ա՛խ, երանի, մի բռպէաչափ նա հիմա սենեակումը չըլինէր. երանի, որևէ բանի համար դուրս գնացած լինէր: (Երկիւղալից նայում է շուրջը): Այս մուր է նա: Ոչ ոք չըկայ: Ուր է գնացել: (Բանում է հաշտի դուրս եւ դեպի այն կողմն ատամ) Փելլա, իվան Կուզմիչն մուր է գնացել:

Գելլայի ձայնը: Այդ տեղ է:

Ազաթեա Տիխոնովիսա: Ո՞ւր է այստեղ:

Գելլա: (Ներս գալով): Նա այստեղ սենեակում նըստած էր:

Ազաթեա Տիխոնովիսա: Հօ տեսնում ես, որ չկայ: Գելլա: Սենեակից դուրս չի եկել. ես հաշտումը նստած էի:

Ազաթեա Տիխոնովիսա: Հապա ուր է:

Գելլա: Ես չգիտեմ ուր է: Զըլինի մէկէլ դունով, հասարակ սանդուխքի վրայից գնացած լինի: Կամ, կարելի է, Արինա Պանտելեյմոնովայի սենեակումն է նստած:

Ազաթեա Տիխոնովիսա: Հօրաքնյը, հօրաքնյը:

ՏԵՍԻԼ ԻԲ.

**Խոյն և Արինա Պանտելեյմոնովինան:**

Արինա Պանտելեյմոնովինա (շքեղ զարդարուած): Ի՞նչ է:

Ազաթեա Տիխոնովիսա: Իվան Կուզմիչը ձեզ մօտ է:

Արինա Պանտելեյմոնովինա: Ո՛չ, նա պիտի այդտեղ լինի, ինձ մօտ չի եկել:

Գելլա: Հաշտումն էլ չի եղել. ես այստեղ նըստած էի:

Ազաթեա Տիխոնովիսա: Դուք տեսնում էք, որ այստեղ էլ չէ:

ՏԵՍԻԼ ԻԲ.

**Խոյն և Կօչկարեօլ:**

Կօչկարեօլ: Ի՞նչ է պատահել:

Ազաթեա Տիխոնովիսա: Իվան Կուզմիչը չըկայ:

Կօչկարեօլ: Ի՞նչպէս թէ չըկայ. գնաց, ի՞նչ է:

Ազաթեա Տիխոնովիսա: Ո՛չ այստեղ է, ոչ գնացել է:

Կօչկարեօլ: Ի՞նչպէս, թէ ոչ այստեղ է և ոչ գնացել է:

Ֆելլա: Խելքս չի հասնում, թէ ուր պիտի գնացած լինի: Բոլոր ժամանակն ես հաշտում նստած եմ եղել և տեղից չեմ շարժուել:

Արինա Պանելյամոնովինա: Ետեի սանդուխը ըստ բուրովին չէր կարող գնալ:

Կօշկարեօվ: Այ, քեզ բան. մարդ գլուխ չի հասում. սենեակից դուրս չեկած՝ որտեղից կարող էր կորչիլ: Թագնուել հօ չը... էյ, իվան կուզմիչ, որտեղ ես: Բաւական է, յիմարութիւնդ թող, շուտ դուրս արի: Այդ ի՞նչ տեսակ կատակ է. վազուց եկեղեցի գնալու ժամանակն է: (Պանարանի հուեն է տնտղում, աթոռների տակըն է աջ ածում): Անհասկանալի է: Սակայն ոչ, նա այստեղից գնալ չէր կարող, ոչ մի կերպով չէր կարող: Նա այստեղ է անշնչշտ: Գտակն էլ, ահա, միւս սենեակումն է. ես ինքս դիտմած տարայ, այստեղ դրի:

Արինա Պանելյամոնովինա: Զընարցնե՞նք աղախնին. նա բոլոր ժամանակ փողոցումն էր կանգնած, կարելի է մի բան զիտենայ... Դունեաշկա, Դունեաշկա...

ՏԵՍԻԼ ԻԵ.

ԵՐԵՄԻ ԵՍ ԳՈՒՅՆԵԱԾԿԱ:

Արինա Պանելյամոնովինա: Իվան կուզմիչը որտեղ է. դու նրան չըտեսամ:

Դունեածկա: Նրանք լուսամուտից ցած թռան: (Ազաֆեա Տիկոնովինան նում է, ձեռքերն իրար զարկիրվ)

Երեք միասին: Լուսամուտից:

Դունեածկա: Հրամելէք: Ցած թռան, կառք նստեցին ու գնացին:

Արինա Պանելյամոնովինա: Ուզի՞ղ ես առում:

Կօշկարեօվ: Առւա ես ասում. անկարելի է:

Դունեածկա: Աստուած վկայ, ցած թռան: Մեր հարևան մանրնք ծախողն էլ տեսաւ: Կառքը

Երկու շահով բռնեցին ու նստեցին, գնացին \*):

Արինա Պանելյամոնովինա: (մօտ գնալով կօշկարեօվին): Ես ի՞նչ արիք, պարո՞ն, կատակ էիք անում. ի՞նչ էր ձեր միտքը՝ ծիծաղել մեր վրայ. մենք ձեր ծաղրատեղն էինք՝ ի՞նչ է: Վաթսուն տարի ապրել եմ և էսպէս թքանքի չեմ հանդիպել: Հիմա ես ինքս կում կանէի, ձեր երեսին կըթքէի, եթէ դուք ազնիւ մարդ լինէիք: Այսուհետեւ դուք կեխառու ու անպիտան էք, դուք ազնիւ մարդ չէք: Հըմ. ողջ աշխարհի մէջ մի աղջկայ խայտառակել: Ես ինքս մի սամիկ կին եմ, բայց այդ բանը չեմ անիւ, անունն էլ ազնուական է: Ձեր ազնուականութիւնն, երեսում է, կեղառութեան ու խայտառակութեան համար է ձեզ պէտքական: (Բարկութեամբ դուրս է գնում՝ տանելով հետք հարսնացուին: Կօշկարեօվը մնացել է շուարած կանգնած):

Ֆելլա: Հը՛, ո՞նց է. հրէս սա է դործ յաջողեցնողը: Մարդն առանց միջի մարդի հարսանիք է գլուխ բերում: Թող, ես ամեն տեսակ փեսացուներ ունենամ, թող գլուխուած ու գգգուած լինին, բայց որ իմ փեսացուքը լուսամուտից իրանց դուրս շպրտեն, թողութիւն կանես, էպէսներն ես ոչ ունեցել եմ, ոչ կունենամ:

Կօշկարեօվ: Դատարկիսաքեր են, էպէս չէ, ես իսկոյն կերթած նրա ետեից ու յետ կըթերեմ: (Գնում է):

Ֆելլա: Գնա ու յետ բեր: Միթէ չըգիտես մարդ ու կնիկ պսակելու բանը: Դեռ ոչինչ, եթէ դոնովը դուրս փախչէր, բայց որ փեսացուն լուսամուտից դուրս ծըլկուի. էդ տեղ արդէն ես գործ չունիմ, էդ տեղ մնաս բարին:

<sup>1)</sup> Ուսւաց ոճ է, ծառաները տէլերի վերաբերմամբ լողակի երբորդ դէմք են գործ ածում: Ծան. Թարգ.

\*ИЗЪ КНИГЪ СИБІРСКИХъ

“НОРДИРОД”

→Ходжикянъ→  
→Оспо, въ Тифлисъ 1911г.→

ՀՀ Ազգային գրադարան



NL0312646

10.466

